



Հայ Դատի Յանձնախումբը Հանդիպեցաւ Գանատայի Ժառանգութեան Նախարար Սթիվըն Կիլպոյի Հետ: Կարդալ էջ 3:

## Հայ Դատի Յանձնախումբը Հանդիպեցաւ Ալպերթա Գահանգի վարչապետ Ճէյըն Քէնիի Հետ



Կարդալ էջ 3:

## Օրինագծերով փորձ է արոււմ տալալել երկրի սահմանադրական կարգը. ՀՅԴ ԳՄ յայտարարութիւնը

Հ. Յ. Դաշնակցութեան Հայաստանի Գերագոյն մարմինը Փետրուար 5-ին հետեւեալ յայտարարութիւնը հրատարակած է.

**Անհրժեշտ է, որ Հայաստանի զարգացումը պայմանաւորուած է ինքնիշխան, ժողովրդավար, սոցիալական եւ իրաւական պետութեան գոյութեամբ: Ճանկացած քաղաքական իշխանութեան կողմից այս կարգավիճակին հակառակ գործելը յանգեցնում է հանրապետութեան գոյութեան դադարմանը:**

**Վերջին շրջանում օրուան քաղաքական իշխանութիւնը ձեռնամուխ է եղել պետական իշխանութեան ինքնուրոյն ճիւղ հանդիսացող դատական իշխանութեան իւրացմանը:**

**Ջբաւարարուելով հակաօրինական բազմաթիւ նախաձեռնութիւններով, անտեսելով հայաստանեան եւ միջազգային հանրութեան կողմից արուած զգուշացումները, արհամարհելով Հայաստանի միջազգային վարկը՝ օրուայ քաղաքական իշխանութեան կողմից նախաձեռնուել է երկրում սահմանադրականութիւնը ոչնչացնող գործընթաց: Ազգային ժողովում քաղաքական մեծամասնութեան պատգամաւորների կողմից շրջանառութեան մէջ են դրուել օրինագծեր, որոնցով փորձ է արոււմ ոչ միայն իւրացնել սահմանադրական դատարանի եւ երկրի նախագահի լիազօրութիւնները, այլ նաեւ տալալել երկրի սահմանադրական կարգը: Այս անպատասխանատու եւ անհաշուենկատ ընթացքը սպառնում է հայոց պետականութեանը: Լրջանալու, սթափուելու եւ իրաւունքի գերակայութեան համաժողովրդական ցանկութիւններն իրականացնելու փոխարէն օրուայ քաղաքական իշխանութիւնը ցուցաբերում է անհաւասարակչիւ վարքագիծ, որն օժտուած է առանձապէս ծանր յանցագործութեան յատկանիշներով եւ քրէօրէն պատժելի է:**

**Պահանջում ենք քաղաքական իշխանութիւնից եւ նրա ղեկավար, Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Նիկոլ Փաշինեանից՝ վերջ տալ քաղաքական իշխանութեան հակաօրինական գործողութիւններին՝ մնալով գործադիր իշխանութեան լիազօրութիւնների շրջանակում, զերծ պահել օրէնսդիր իշխանութեան քաղաքական մեծամասնութեանը լիազօրութիւնների չարաշահումից, ջանքեր գործադրել՝ լուծելու երկրի առջեւ օրեցօր ահազանցող մարտահրաւէրները:**

**Կոչ ենք անում Հանրապետութեան նախագահին՝ չստարել այս հակաօրինական նախաձեռնութիւններին եւ հետեւել իշխանութիւնների տարանջատման ու հաւասարակչուման սահմանադրական սկզբունքի պահպանմանը:**

**Դիմում ենք ողջախոս հանրութեանն ու քաղաքական ուժերին՝ համախմբուել երկիրն այս կործանարար ընթացքից եւ պահելու օրակարգի շուրջը:**  
**ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմին**



Հանդիպում Գանատա-Հայաստան Խորհրդարանական խմբակցութեան նախագահ Պրայըն Մէյի հետ: Կարդալ էջ 3:



Հայ Դատի Յանձնախումբը Հանդիպեցաւ Գանատայի Խորհրդարանի Արցախի Բարեկամական Խմբակցութեան Ղեկավար Ռէյըլ Հարտըրի Հետ: Կարդալ էջ 3:

**www.horizonweekly.ca**

CONNECT WITH US:

- facebook.com/pages/horizonweekly
- @horizonweekly
- horizonweekly
- YouTube – Horizon Weekly TV



**HONDA**

**Your Passport to Adventure.**

**2018 Passport TOURING**

Selling start from **\$50,900\***

**LEAP ON IT!**

**HONDA GABRIEL**

Book your test drive with **Tro Bachekjian**

7000, boul. Henri-Bourassa E.  
Montréal, QC H1G 6C4  
**514 - 327 - 7777**  
[www.hondagabriel.com](http://www.hondagabriel.com)



# Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN  
NOW OPEN



Սեփականատեր  
Յարութ Միֆան

Ընտանեկան բացառիկ գործառնություն  
ուր կը գտնեք ձեր բոլոր կարիքները  
ուտելիքներու վերաբերեալ

## IN HOUSE

COFFEE ROASTING & GRINDING  
ROASTING FRESH NUTS  
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA  
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել  
Հնտեղէն աղալ օրական դրութեամբ  
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել  
Թոնիքի հաց եւ իրաքեան սոմոն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher  
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200  
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



Հայ Դատի Յանձնախումբը Հանդիպեցաւ Գանատայի Ժառանգութեան Նախարար Սթիվըն Կիլպոյի Հետ

Յունուար 31-ին, Գանատայի Հայ Դատի Շրջանային եւ Քէպէքի տեղական յանձնախումբերը ներկայացնող միացեալ պատուիրակութիւն մը հանդիպում ունեցան Գանատայի նորանշանակ ժառանգութեան նախարար Սթիվըն Կիլպոյի հետ:

Պատուիրակութեան մաս կը կազմէին Օթթաուայի գրասենեակի գործավար Սեւակ Պէլեան, Շրջանային յանձնախումբի անդամ Հրակ Չինչինեան, Մոնթրէալի Հայ Դատի յանձնախումբի ատենապետուհի Արփի Պալուզեան եւ յանձնախումբի անդամ Աբրահամ Նիգիպեան:

Հանդիպման ընթացքին, Հայ Դատի ներկայացուցիչները նախարարին համապարփակ ձեւով ներկայացուցին Գանատահայութեան պատմութիւնն ու Հայ Դատի գործունէութիւնը, ինչպէս նաեւ առիթը ունեցան անոր հետ քննարկելու շարք մը հարցեր: Քննարկման առարկայ դարձան Յեղասպանութեանց յիշատակման, դատապարտման եւ կանխարգիլման ամսուան աշխատանքները, Գանատա-Հայաստան երկկողմանի յարաբերութիւնները, ցեղասպանութեան ուսուցման կարեւորութիւնը եւ Գանատայի մէջ առցանց ատելութեան եւ ցեղապաշտութեան դէմ պայքարի գործընթացն ու Հայ Դատի յանձնախումբի տարած աշխատանքը այդ ուղղութեամբ:

Նախարարը իր կարգին գնահատանքով արտայայտուեցաւ գանատահայութեան եւ Հայ Դատի յանձնախումբի գործունէութեան մասին:

Հայ Դատի Յանձնախումբը Հանդիպեցաւ Ալպերթա Գահանգի վարչապետ Ճէյսըն Քէնիի Հետ

Երեքշաբթի 4 Փետրուար, 2020-ին, Մոնթրէալի մէջ տեղի ունեցած յատուկ ընդունելութեան մը ընթացքին, Գանատայի Հայ Դատի Յանձնախումբը ներկայացնող պատուիրակութիւն մը հանդիպեցաւ Ալպերթա նահանգի վարչապետ, դաշնակցային նախկին նախարար եւ Հայ ժողովուրդի մեծ բարեկամ Ճէյսըն Քէնիի հետ:

Հայ Դատի յանձնախումբի պատուիրակութեան մաս կը կազմէին ՀՅԴ Գանատայի Կեդրոնական Կոմիտէի ատենապետ Մհեր Գարագաշեան, Հայ Դատի Շրջանային յանձնախումբի ատենապետ Հրակ Տարաքեան, յանձնախումբի անդամ Հրակ Չինչինեան, Հայ Դատի Օթթաուայի գրասենեակի նախկին գործավար եւ վաստակաշատ գործիչ Ռուբէն Գոյումեան եւ Սէլին Գուլումեան:

Հանդիպման ընթացքին, Հայ Դատի պատուիրակները վերլիչեցին իրենց ունեցած սերտ գործակցութիւնը վարչապետ Քէնիի հետ եւ անոր ցուցաբերած անվերապահ աջակցութիւնը Գանատահայ համայնքին: Անոնք նաեւ շնորհակտեցին Քէնիի արձանագրած ընտրական յաջողութիւնը Ալպերթայի մէջ, մաղթելով յաջողութիւն:

Հարկ է նշել, որ Քէնի այս ընդունելութիւնը կազմակերպած էր յատկապէս հանդիպելու տարբեր համայնքներու ներկայացուցիչներու եւ բարեկամներու հետ, որոնց հետ ինք անմիջական համագործակցութիւն ունեցած էր դաշնակցային իր պետական գործունէութեան ընթացքին:

Հանդիպում Գանատա-Հայաստան Խորհրդարանական խմբակցութեան Գահանգի Պրայըն Մէյի հետ

Յունուար ամսուան աւարտին, Գանատայի Հայ Դատի յանձնախումբի Օթթաուայի գրասենեակի վարիչ գործավար Սեւակ Պէլեան շարք մը հանդիպումներ ունեցաւ դաշնակցային երեսփոխաններու եւ պետական պաշտօնատարներու հետ:

Յատուկ հանդիպումներ կայացան Գանատա-Հայաստան Խորհրդարանական խմբակցութեան նախագահ Պրայըն Մէյի, խմբակցութեան փոխ-ատենապետ եւ Նոր ժողովրդավարական Կուսակցութեան փոխ նախագահ երեսփոխան Ալէքսանտր Պուլէրիսի, երեսփոխան Մայքըլ Քուրբրի եւ շարք մը այլ պետական պաշտօնատարներու հետ:

Հանդիպումներու ընթացքին քննարկուեցան Գանատա-Հայաստան խորհրդարանական խմբակցութեան գործունէութեան, երկկողմանի յարաբերութիւններու զարգացման, Արցախեան հիմնահարցի խաղաղ կարգաւորման հարցերը:

Հայ Դատի Յանձնախումբը Հանդիպեցաւ Գանատայի Խորհրդարանի Արցախի Բարեկամական Խմբակցութեան Ղեկավար Ռէյչըլ Հարտորի Հետ

Հինգշաբթի, 30 Յունուար, 2020-ին, Հայ Դատի Օթթաուայի գրասենեակի վարիչ գործավար Սեւակ Պէլեան յատուկ հանդիպում մը ունեցաւ Գանատայի խորհրդարանի Արցախի Բարեկամական Խմբակցութեան Ղեկավար Ռէյչըլ Հարտորի հետ:

Հանդիպման ընթացքին, ընթացիկ հարցերու կողքին, կողմերը քննարկեցին Մարտ 31-ին Արցախի մէջ տեղի ունենալիք նախագահական եւ խորհրդարանական համատեղ ընտրութեանց հոլովոյթն ու անոնց կարեւորութիւնը, բանակցային ներկայ գործընթացը, խմբակցութեան յառաջիկայ ծրագիրներն ու շարք մը այլ առաջնային կարեւորութիւն ունեցող հարցեր:

Ժողովի աւարտին կողմերը հաստատեցին խմբակցութիւնը առաւել ընդլայնելու հրամայականը եւ Արցախեան հիմնահարցը Գանատայի նորընտիր խորհրդարանականներուն աւելի մօտէն ծանօթացնելու անհրաժեշտութիւնը:

Հորիզոն www.horizonweekly.ca

RITA BAGHDASSARIAN
Conseillère en Sécurité Financière
Revenu Garantie Viager
COMPTE D'ÉPARGNE LIBRE D'IMPÔT (CELI) • CRÉATION D'HÉRITAGE • REER, FERR, RENTE RETRAITE • PLAN D'ÉDUCATION-REÉÉ • ASSURANCE-VIE & HYPOTHÉCAIRE • ASSURANCE SALAIRE & COLLECTIVE • ASSURANCE DE PARTENARIAT
3820, boul. Lévesque Ouest, Bureau 101, Laval Qc. H7V 1E8
Tél.: (450) 973-2822 • (514) 884-1117 • Fax: (450) 973-2262
ritabagh@yahoo.com

VIZUALIS
optométriste
DR SHANT DONABEDIAN
Centre d'Achat Fairview - Fairview Mall
Pointe Claire
514 695 2555 - VIZUALIS.CA

Danièle Papazian, MSc.
Courtier immobilier
C 514.234.6799
dpapazian@remax-quebec.com
www.remaxducartier.com
RE/MAX DU CARTIER
1290, rue Bernard Ouest, bureau 100
Outremont Qc H2V 1V9
T 514.271.2131

Assura Bien inc.
Cabinet en assurance de dommages et de services financiers
Ապահովագրական գրասենեակ
KRIKOR ABRAKIAN VAHAN MATOSSIAN
970 Montée de Liesse, suite 306, Saint-Laurent, Qc. H4T 1W7
T: 514.903.3999

Pâtisserie MAHROUSÉ
FONDÉE EN 1970
9705 Boulevard de l'Acadie, Montréal, QC H4N 2W2
Tél: 514.279.1629 • info@mahrouse.ca • www.mahrouse.ca

JACOB & JACOB
BODY SHOP
CAS D'ASSURANCES
6280 St. Jacques, Montréal, Québec, H4B 1T6
Tél: (514) 484 - 7945 Fax: (514) 484 - 2487
jacobautobody@bellnet.ca www.carrosseriejacobetjacob.ca

RE/MAX
RE/MAX 3000 inc.
Agence immobilière
Elie Berberian
Courtier immobilier / Real Estate Broker
C 514.519.3543
B 514.333.3000

KORONA
JOAILLIERS • 1964 • JEWELLERS
Daniel Torosian
3933 St Martin O. Coin Curé-Labelle Laval, Qc.
514-274-5555 | 450-688-5515 | korona.ca

Assurances
Vrej Teslakian
Agence du Quartier DIX30
9840, boul. Leduc
450-500-4736
VTeslakian@allstate.ca

FIVE STAR ELECTRIQUE
CINQ ÉTOILES
SPECIALIST IN DECORATIVE GARDEN LIGHTING
RESIDENTIAL-COMMERCIAL
BEDROS NALPATIAN
442, LA RIVIÈRE, LAVAL, QC.
TEL: 514-497-5155 FAX: 450-689-3997
E-MAIL: ELECTRIC.FIVESTAR@GMAIL.COM

CENTUM
Metrocorp Wealth Solutions Inc.
License # 12147
Mortgage programs for new comers to Canada
New purchases
Refinancing
Second mortgages
Self employed
Low credit score
Access to top lenders including private lenders
416.662.6650 cell
centum.ca/sosie\_demersesian

Pharmacie Levon Benohanian et Mher Koubelian Inc.
Pharmaciens-propriétaires
3915, Boulevard Samson
Laval, QC H7W 2G1
T 450 688-4111
F 450 681-5525
Lun, au vend.: 8h30 à 21h
Sam, et dim.: 9h à 17h
Infirmière (jeudi): 8h30 à 15h
LIVRAISON GRATUITE
Proxim

# Չաւախքը Սահուն Կերպով Նախիջեւանի Է Վերածում

Վրաստանի Սամցխէ-Ջաւախք շրջանը գտնուում է շատ բարդ աշխարհաքաղաքական դիրքում: Այստեղ բախուում են Ազրայէյճանի, Թուրքիայի, Վրաստանի ու Հայաստանի շահերը: Այս տարածաշրջանի նկատմամբ հետաքրքրութիւններ ունի նաեւ Ռուսաստանի Դաշնութիւնը, ինչը արտայայտուում է տարբեր ձեւերով: Սակայն այստեղ գլխաւոր խաղացողները վերոնշեալ չորս պետութիւններն են, որոնց նպատակները տարբեր են: Թուրքիան ու Ազրայէյճանը այլ շահեր ու ծրագիրներ ունեն Ջաւախքի նկատմամբ, Հայաստանն ու Վրաստանը՝ այլ: Չնայած, որ Հայաստանի ու Վրաստանի շահերը ընդհանուր առումով համընկնում են, սակայն ի տարբերութիւն Թուրքիայի ու Ազրայէյճանի՝ նրանք չեն գործում միասնական ձեւով եւ դրանով յաճախ ջուր լցնում թուրք-ազրայէյճանական օրակարգի ջրաղացին:

Թուրքիան ոչ մի կերպ չի համակերպուում այն մտքի հետ, որ 1830-ական թուականներին ստիպուած էր գիշել Ախալցխայի փաշալիքը Ռուսական կայսրութեանը: Այն մինչեւ հիմա յաւակնութիւններ ունի Աճարիայի ու Ջաւախքի նկատմամբ, բայց ի տարբերութիւն 1918 թուականի, երբ Թուրքիան բացայայտ ձեւով յարձակուել էր Սամցխէ-Ջաւախքի վրայ, հիմա Թուրքիան փորձում է այս շրջաններին տիրանալ ֆինանսական ներդրումների ու մարդ-

կային ներհոսքի միջոցով: Սակայն չի բացառուում, որ օրերից մի օր անհաւասարակշիռ Ռեճեպի Թայիփ էրտողանը աշխարհաքաղաքական դէպքերի բերումով որոշի զօրք մտցնել Աճարիա ու Ջաւախք: Դէպքերի նման զարգացումը այս պարագայում հետաքրքրական է թւում եւ այն այս պայմաններում քիչ հաւանական է, սակայն ոչ մէկը գիտի՝ ի՞նչ իրավիճակ է լինելու վաղը մեր տարածաշրջանում: Ու եթէ մենք հաշուի առնենք Թուրքիայի ռազմական յարձակողապաշտութիւնը Իրաքում ու Սիրիայում, ինչպէս նաեւ՝ հիւսիսային Կիպրոսի բռնազավթումը ու լարուած պահուածքը Հայաստանի նկատմամբ, ապա ամէն ինչ իր տեղն է ընկնում՝ բացայայտելով Թուրքիայի իրական պատկերը: Նոյնիսկ Ռեճեպի Թայիփ էրտողանը երբեք չի թաքցրել, որ յաւակնութիւններ ունի Պաթումի նկատմամբ:

Եւ ահա այս պայմաններում արդէն ուղիղ 30 տարի է, ինչ Սամցխէ-Ջաւախքի տարածաշրջանը արագ կշռոյթով հայաթափուում է՝ խնդիրներ ստեղծելով Վրաստանի ու Հայաստանի անվտանգութեան համար: Հետաքրքրականը այն է, որ ո՛չ Հայաստանը եւ առաւել եւս ոչ Վրաստանը չեն գիտակցում այս վտանգի հետեւանքները: Վրաստանը նոյնիսկ կարծում է, որ ինքնուրոյն կարողանալու է լուծել այս ժողովրդագրական խնդիրը, որը ստեղծուել է հայերի հեռացման պատճառով: Սակայն վերջին

տարիների փորձը ցոյց է տալիս, որ հայաթափուած Ախալցխա քաղաքում հայերի տեղը զբաղեցրել են նոյն շրջանի գիւղերից քաղաք իջած վրացիները, ինչի պատճառով իրենց վրացական գիւղերն են դատարկուել: Դրանից բացի, նրանց մի մասը հեռացել է Թիֆլիս՝ ցանկանալով ապրել մայրաքաղաքում: Վերջին տասնամեակներին, եթէ ինչ-որ ներգաղթ էլ եղել է, դա կատարուել է այսպէս կոչուած թուրք-մեսիսիցիների հաշուին: Այսպիսով պէտք է փաստենք, որ շրջանը կամաց-կամաց հայաթափուում է՝ վտանգելով իր քրիստոնէական դիմագիծը: Նոյն իրավիճակն է նաեւ Ախալքալաքում եւ Նինոծմինտայում: Ուղղակի այնտեղ գիւղերի շատ լինելու պատճառով խնդիրը այդքան աչքի չի ընկնում, ինչպէս Ախալցխայում:


Ազրայէյճանը իր հերթին ամէն ջանք գործադրում է, որ Վրաստանի Բուեճօ Քարթլի շրջանում, որը սահմանակցում է Սամցխէ-Ջաւախքին, գնալով աւելանայ ազրայէյճանական բնակչութիւնը ու դրա հետ մէկտեղ՝ իր ազդեցութիւնը: Նրանց ծրագիրը շատ պարզ է: Այստեղով իրականացուում են նրանց տնտեսական եւ փոխադրական խոշորագոյն նախագծերը, որոնք են՝ Պաքու-Թիֆլիս-Ճէյհան եւ Պաքու-Թիֆլիս-Կարս: Թուրքիայի ու Ազրայէյճանի միջեւ փոխադրական ու ուժանիւթային կապը արդէն փաստացի կայ եւ մնում է այն ամրագրել թուրքական

ազգաբնակչութեան ներկայութեամբ: Իսկ հայաթափուած եւ թուրք-մեսիսիցիներով բնակեցուած Սամցխէ-Ջաւախքի տարածաշրջանի վերջին հանգրուանը Թուրքիան ու Ազրայէյճանն է լինելու: Նման չարաբաստիկ բեմագրութեան իրականացման դէպքում Վրաստանը կարող է կորցնել այս գեղեցիկ շրջանը, իսկ Հայաստանը յայտնուել Թուրքիայի ու Ազրայէյճանի լրակատար շրջափակման մէջ: Այս իրավիճակում Նախիջեւանի հայաթափման ցաւալի ու վտանգաւոր հետեւանքները շատ աւելի մեղմ են թուալու, քան՝ Ջաւախքի հնարաւոր հայաթափման հետեւանքները:

2018 թուականին Հայաստանում տեղի ունեցած թաւշեայ յեղափոխութիւնից յետոյ Նոր Հայաստանի իշխանութիւնները պէտք է լաւ վերլուծեն այս տարածաշրջանում կատարուող իրադարձութիւնները եւ փորձեն անկեղծ գրոյց սկսել Վրաստանի իշխանութիւնների հետ՝ կանխելու համար թուրք-ազրայէյճանական նենգ ծրագիրը Սամցխէ-Ջաւախքի ու Աճարիայի վերաբերեալ: Դա հարկաւոր է անել ինչպէս Հայաստանի, այնպէս էլ Վրաստանի անկախութեան ու ինքնիշխանութեան ապահովման համար:

ԵՂՈՒԱՐԴ ԱՅՎԱԶԵԱՆ  
Սամցխէ-Ջաւախքի Մետիա  
Վերլուծական կեդրոն

**Հորիզոն** [www.horizonweekly.ca](http://www.horizonweekly.ca)



**ԼՈՐԻ - ԶԱԿԱՆՔ**  
**ՅԱՆՉՆԱՍՈՒՄ**

**Լոռիի եւ Չաւախքի Հետ**  
**ԶՕՐԱԿՑԱԿԱՆ ՀԱՆԳԱՆԱԿԱՅԻՆ ՀԱԲԱՔ**

Կը գեկուցէ՝

**Չաւախքի Փոնտի Կեդրոնական Յանձնախումբի Ատենապետ՝**  
**Իվան Արտիպլեան**

Տեղի կ'ունենայ

<p><b>Թորոնթօ</b> Կիրակի Մարտ 15, 2020 Հայ կեդրոնի սրահէն ներս Կեսօրէ ետք ժամը 1:30-ին 45 Hallcrown Place, North York</p>	<p><b>Մոնթրէալ</b> Երկուշաբթի Մարտ 16, 2020 Հայ կեդրոնի Ահարոնեան սրահէն ներս Երեկոյեան ժամը 8:00-ին 3401 Rue Olivar-Asselin, Montreal</p>
---	--

# «Արտաքին Ասելի՛ Հոգին Է Կարելորդ, Որ Յաւիտեան Կը Մնայ», Գրիգոր Ակոբեան

Համագազայինի «Սամահին» մասնաճիւղի կազմակերպութեամբ, Մոնթրէալի «Շաֆէ Կէօնեան» կեդրոնէն ներս Փետրուար 21-ին պիտի կայանայ լիբանանահայ արուեստագետ Գրիգոր Ակոբեանի նկարչական գործերու ցուցահանդէսը: Այս առիթով, արուեստասէր մեր ընթերցողներուն կը ներկայացնենք մեր պաշտօնակից «Ազդակ»-ի մէկ հարցազրոյցը արուեստագետին հետ: Հարցազրոյցը կատարուած է 9 մայիս 2019-ին Համագազայինի «Լիւսի Թիւթիւնեան» ցուցարահին մէջ կայացած Գրիգոր Ակոբեանի աւելի քան 50 տարուան ստեղծագործական գործունէութեան արգասիքը հանդիսացող երկու արվամներու շնորհահանդէսի նախօրեակին: Այդ առիթով «Ազդակ»-ի աշխատակից Սիլվի Արէլեան հարցազրոյց կատարած է արուեստագետին հետ:

«Ա.Զ.Կ.»- Խօսինք տեղի ունեցող ցուցահանդէսին մասին: Ի՞նչ պիտի ներկայացնէք:

Գ.Ր.Ա.Ք.- Նախ կ'ուզեմ շնորհակալութիւն յայտնել ընկերոջ՝ Լիբանանի թեմի առաջնորդ Նարեկ արքեպիսկոպոսին, որ հովանաւորած է ցուցահանդէսը: Շնորհակալութիւն կ'ուզեմ յայտնել նաեւ Շահէ Խաչատուրեանին, Նշան եւ Սրբուհի Պապիկեաններուն, որոնք գիրքիս մեկնասար էղան:

Այս ցուցահանդէս յետագարձ ակնարկ մըն է իմ ստեղծագործական բոլոր փուլերուն. իմ ստեղծագործական կեանքին մէջ ես քանի մը անգամ յետագարձ ակնարկ մը նետելով գործերուս վրայ՝ ցուցահանդէս կազմակերպած եմ: Յետագարձ ակնարկ երբ կ'ըսեմ, կը հասկնամ քիչ մը հին գործեր եւ նոր գործեր, որոնք իրարու կը կապեն: Թէեւ ցուցասարձը նեղ է գործերուս համար, բայց բոլոր ժանրերէն քանի մը նկար տեղադրած եմ: Ամէնէն հին գործս 1966 թուականի է, իսկ ամէնէն նորը՝ 2017-ի:

Գործերուս մեծամասնութիւնը իմ անձնական հաւաքածոյն է, որ շատեր չեն տեսած: Գործերուս մէջ կայ փրիւթիկ կրաւիւր, այստեղ տպագրութիւնը նոյն բառը չէ, որովհետեւ ձեռքով տպած եմ եւ: Ամէն մէկ օրինակէն ամէնէն շատ

6-7 հատ ունիմ: Իմ կրաւիւրներս թիւով 6-7 հատ են, շարք մը կայ, որմէ տասը հատ ըրած եմ: Ամէն մէկէն մէկ-երկու հատ պահած էի:

Քոլաժներս կան, իրականութեան մէջ միքս միտիա են, որովհետեւ քոլաժը 20 առ հարիւր է, մնացածը աքրիլիքով եւ թրովերը մատիտով աշխատած եմ, ամէնը ապակիին տակն է: Ինչ որ թուղթ է, ապակիին տակ կ'անցնի:

Իսկ նորութիւնը, որ Լիբանանի եւ Միջին Արեւելքի մէջ չկայ եւ եւրոպայ շատ քիչ կայ, այն է, որ ես ձեռքովս թուղթ շինած եմ: Ձիները 2200 տարի առաջ թուղթի գիւտը կատարած են: Մինչեւ այսօր շատ բան չէ փոխուած: Իրենք կ'առնէին յատուկ բոյսերը եւ կը ծեծէին, ապա հեղուկ մը կը պատրաստէին, որմէ ետք կը ճնշէին, ապա դուրսը կը դնէին, որ չորնայ եւ թուղթ մնայ: 1989-ին, երբ Մոնրէալ գացի երկու ցուցահանդէս ունէի՝ մէկը Մոնրէալ, միւսը՝ Թորոնթօ, 3 տարի հոն մնացի եւ չկրցայ վերագառնալ հոս: Ես միշտ ալ հետաքրքրուած էի, թէ ինչպէ՛ս կը շինեն թուղթը: Գացի եւ թուղթ շինելու դասընթացի մը հետեւեցայ: Ձեռքով պատրաստուած այդ թուղթին վրայ ի՛նչ գոյն ալ դնես, կը վազէ, չես կրնար կեցնել: Ես ուզեցի գոյնը կեցնել: Ձեռքով շինուած թուղթին վրայ դեռ մէկը չէ կրցած գոյնը կեցնել: Ես կեցուցի, յաջողեցայ: Քանի մը ամիս վերջ գարմացան, թէ ինչպէ՛ս կրցայ ընել այդ իրագործումը: Ինծի մրցանակ տուին Քեպէլի արուեստի կազմակերպութեանէն, այս մէկը գիրքիս մէջ ալ գրած եմ:

Ուրեմն, «Լիւսի Թիւթիւնեան» ցուցասարձին վարի բաժինը աւելի հին գործերս ներկայացուցած եմ, իսկ վերի բաժինը՝ նոր գործերս, որոնք բոլորը միասին կը հաշուեն 99 գործ:

Երբ գործ մը տարիներ աշխատիս ու կատարելագործութեան հասցնես, ստորագրութեան պէտք չես ունենար: Տեսնողը կը գիտնայ, որ անոնք գործերդ են: Ես անոնցմէ չեմ, որ 30-40 տարի նոյն ոճը կը գործածեմ: Ես երբեք նոյն ոճը չեմ ըրած գործերուս մէջ: Գործս շարունակականութիւն ունի: Մէկը 60-ական, 70-ական եւ վերջին գործերս երբ



տեսնէ, շարունակականութիւն մը անպայման կը նշմարէ: Ես պտուղներ նկարեցի՝ նուռ, կիներ, հաւկիթ, ծառ, վերջին գործերս ձիեր են: Ձիին մէջ իմ գերիրապաշտ գործերս են: Երկու-երեք օր իրարու ետեւէ յիշեցի, թէ ինչպէ՛ս հայրս ինծի կարուսեկ կը տանէր: Այդ ձիերը առի եւ գերիրապաշտ գործերուս մէջը դրի:

Ես ճանչցուած եմ որպէս գերիրապաշտ արուեստագէտ: Նուռին հետ ձուկ, պարան, բանալի դրած եմ, նուռը փշուած եւ օգին մէջ նեկայացուցած եմ: Ուրեմն գործերուս մէջ միշտ իրապաշտութիւն, գերիրապաշտութիւն, վերացականութիւն կայ:

Այս ցուցահանդէսը դիտողը պիտի տեսնէ արուեստին մէջ իմ ճամբորդութիւնս: Ո՛ւր պիտի հասնիմ յետոյ՝ մարդ չի գիտեր: Տեսէք, երբ որ թուղթերու պատրաստութեան սկսայ, Լիբանանի պատերազմի ջղայնութիւնս դեռ մէջս էր, թուղթերուս մէջ պատերազմ դրի: Թուղթին վրայ ծակի հետքեր դրի: Կը տեսնէք՝ իմ աշխարհս կիսուեցաւ, բաժնուեցաւ, բայց ամէն բան պիտի չնետես, պէտք է կապես ու պահես, կապը իմ պատկերներուս մէջ այն է, որ ամէն մարդ ամէն ինչին կապուած է, տոմիտոյի պէս իրարու կապուած ենք. եթէ մէկը իյնայ, բոլորն ալ կ'իյնան: Եթէ օդը ապականի, բնութիւնն ալ կ'ազդուի, մարդն ալ, անասուններն ալ: Եթէ մեղու չկայ, կերակուր չ'ըլլար, մենք բոլորս իրարու կապուած ենք:

«Ա.»- Խօսինք մեծ ձեր ար-

տաքակուած արվամներուն մասին:

Գ. Ա.- Գիրքս երկու հատոր է, իւրաքանչիւրը՝ 180 էջ: Գիրքերուն մէջ ներկայացուցած եմ թանգարաններուն մէջ տեղադրուած գործերս, յետոյ՝ ստացած մրցանակներս, անկէ ետք ներկայացուցած եմ հին գործերս:

Իրականութեան մէջ բոլոր գործերս չեմ կրնար գիրքին մէջ դնել: Անոնք թերեւս 10 հատոր կը կազմեն եւ աւելի:

Ասիկա առաջին գիրքս է, կրցածիս չափ իմ ճաշակիս ըրի: Զոյգ հատորներուն մէջ ներառած եմ նաեւ կրաֆիք գործերս:

«Ա.»- Արտաքին երեւոյթները որքանով կ'ազդեն արուեստագետին վրայ:

Գ. Ա.- Անկարելի է, որ արուեստագէտ մը չազդուի արտաքին երեւոյթներէն: Փիքասօն «Լա Կուերնիքա»-ն չէր գծեր, եթէ Կուերնիքան չ'ըլլար: Աշխատած ատենս ի՛նչ որ կը լսեմ ու կը տեսնեմ, կ'ազդեն վրաս: Լիբանանի պատերազմէն շատ ազդուեցայ: Գործերուս մէջ կայ պատերազմ, բայց դիտողը չի գգար: Կիներու վերաբերող գործերս պատերազմի հետքեր են. կիները արտաքինին շատ կարեւորութիւն կու տան, բայց ներսն է կարեւորը: Պատկերներուս մէջ հաւկիթները կոտորած եմ, որովհետեւ կեղեք չէ կարեւորը, մէջինն է կարեւորը: Ընդհանրապէս ալ կիներ, որուն ներքինն է կարեւորը, հոգին է կարեւորը, դուրսը կը ծերանայ, կը հինայ, կը հիւանդանայ, բայց ներսը յաւիտեանս կը մնայ:

**Ghadir Meat & Restaurant**  
T. 416-750-7404  
T. 416-750-7400  
1848 Lawrence Avenue E.  
Scarborough, ON M1R 2Y4  
E-mail: info@ghadirmeatmarket.com

**RE/MAX West Realty Inc., Brokerage**  
**Anto Keledjian**  
Sales Representative  
Residential & Commercial  
Dir: (416) 930-2686  
Bus: (416) 588-6777  
570 Bloor St. W., Toronto, ON M5G 1K1  
ANTOK13@GMAIL.COM • WWW.TORONTOSOLD.CA

**SUQ**  
2 Champagne Drive # B9  
Toronto, ON M3J 2C5  
Tel: (416) 661 8998  
www.suqkitchen.ca

**ANI Restaurant**  
905.761.6484  
1450 Clark Ave. West,  
Thornhill ON L4J 7R5

**Sutton**  
Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage  
1206 Centre Street, Thornhill, Ontario L4J 3M0  
**Annie Varbedian**  
Sales Representative  
Direct: (416) 918-3615  
Office: (416) 739-7200  
Fax: (416) 739-9367  
annievarbed@icloud.com  
www.suttongroupadmiral.com

**hearing aid source**  
**Andre Ayzazyan HIS B.A.S.**  
andre@HearingAidSource.ca  
416 754 4327 (HEAR)  
Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9

**Gary Chahinian** President, Broker of Record  
416-258-8892  
**Gabriel Chahinian** Sales Representative  
647-580-5818  
The Diamond Realty

**I.D.A.**  
Part of the **Accord** family of pharmacies.  
Pharmacists  
**Sarkis Balian**  
**Vartan Balian**  
**Maral Abdalian Balian**

**ANI BAKERY**  
ԱՆԻ ՓՈԱՊԱՆ  
**Middle Eastern Pizza**  
**Lahmajoun**  
**ARSEN DABBAGHIAN**  
25 Howden Road, Unit #2  
Scarborough, Ontario M1R 3C8  
Tel: 416.285.7164

# Մենք ազգային օրակարգ մէջտեղ բերող, այդ օրակարգը սրբութեամբ պահպանող ազգային քաղաքական ուժ ենք մեր ողջ համահայկական կառուցով. **ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմնի ներկայացուցիչ Իշխան Սաղաթելեան**

ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմնի ներկայացուցիչ Իշխան Սաղաթելեանը ԱՄՆ աշխատանքային այցի շրջանակներում հիւրընկալուել է Լոս Անջելեսի Horizon Armenian TV-ի տաղաւարում: Հարցազրոյցի գլխաւոր հատուածները՝ ստորեւ.

**ՆԱՆԷ ԱԻԱԳԵԱՆ.-** Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը յայտարարել է, որ արմատական ընդդիմութիւն է: Ի՞նչ ծրագրերով էք առաջնորդուում, ո՞րն է ձեր օրակարգը:

**ԻՇԽԱՆ ՍԱՂԱԹԵԼԵԱՆ.-** Հայաստանում խոհարարական վերջին ընտրութիւնների արդիւնքում ձեւաւորուեց խորհրդարան՝ կազմուած երեք քաղաքական ուժերից, որոնցից մէկը ձեւաւորեց ՀՀ իշխանութիւնը: Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնն այս ընտրութիւններում չանցաւ խորհրդարան: Մեր վերջին ընդհանուր եւ գերագոյն ժողովներում քննարկումներից յետոյ, յայտարարեցինք, որ Դաշնակցութիւնը արտախորհրդարանական ընդդիմադիր քաղաքական ուժ է: Անցնող մէկ տարուայ ընթացքում, մենք ուշադրութեան կենտրոնում ենք պահել կառավարութեան գործունէութիւնը. ստեղծել ենք մասնագիտական ոլորտային տասներկու յանձնախմբեր, որոնց միջոցով յետեւում ենք կառավարութեան ծրագրերին եւ ոչ միայն քննադատում ենք կառավարութեան, մեր պատկերացմամբ սխալ աշխատանքները, նաեւ յաճախ առաջարկում ենք այլընտրանքներ: Երբ ՀՀ կառավարութիւնը, օրինակ, կ'առուցուածքային փոփոխութիւններ էր իրականացնում՝ օպտիմալացնելով (բարեկարգելով-նորոգելով) նախարարութիւնները, մենք քննադատում էինք եւ սխալ էինք համարում օրինակ սփիւռքի նախարարութեան փակումը, միաժամանակ՝ առաջարկելով մեր լուծումները:

Այսինքն, Դաշնակցութիւնը ընդդիմադիր քաղաքական ուժ է, որը չի կիսում իշխանութիւնների վարած ներքին եւ արտաքին քաղաքականութիւնը, քննադատութեանը գուզահեռ ներկայացնում է իր պատկերացումները, եւ սա բնական քաղաքական գործընթաց է:

Մենք ազգային օրակարգ մէջտեղ բերող, այդ օրակարգը սրբութեամբ պահպանող ազգային քաղաքական ուժ ենք մեր ողջ համահայկական կառուցով: Շատ յաճախ, երբ ասում ենք ազգային, Արցախ, Հայոց Յեղասպանութեան միջազգային ճանաչում, Հայ Դատ, մեզ գիտեն այս տեսանկիւնից, բայց մենք սրանից անբաժան ենք պահում մեր երկրի տնտեսական զարգացումը, սոցիալական (ընկերային-նմբ.) արդարութեան հաստատումը: Եթէ մենք չունենանք հզոր տնտեսութիւն, իրական սոցիալական արդարութիւն, մենք չենք կարող նաեւ ունենալ հզոր բանակ եւ հետեւաբար՝ պաշտպանել մեր հայրենիքը: Այս իմաստով, դրանք փոխկապակցուած են: Մենք պէտք է ունենանք սոցիալական արդարութիւն, հզոր տնտեսութիւն, եւ մեր հայկական աւանդական արժէքները պէտք է սրբութեամբ պահպանուեն եւ զարգացուեն: Ձի կարող ՀՀում եկեղեցու դէմ ոտնձգութիւն լինել, չի կարող համալսարաններում հայերէնի դասաւանդումը լինի ոչ-պարտադիր, պէտք է լինի պարտադիր, չի կարող դպրոցներում հայոց եկեղեցու պատմութիւն չդասաւանդուել: Մենք այս արժէքները պաշտպանող կուսակցութիւն ենք, եւ սա պաշտպանել ենք պետութիւն չունենալու պայմաններում, Սփիւռքում: ԱՄՆ այցիս շրջանակներում, այցելել էի Ռոզ եւ Ալէք Փիլիպոս Ազգային վարժարան, որտեղ եթէ հարիւր աշակերտ երգում, գրում, կարդում էր հայերէն, ամէն աշակերտի աչքերում կար Հայաստան: Սա պարտաւորեցնող է Հայաստանին, մենք պարտուելու իրաւունք չունենք, եւ որեւէ մէկին էլ թոյլ չենք տալ պարտուել:

**ՆԱՆԷ ԱԻԱԳԵԱՆ.-** Ի՞նչ սխալներ յատկապէս կատարելու եք:

**ԻՇԽԱՆ ՍԱՂԱԹԵԼԵԱՆ.-** Ամենամեծ եւ կարեւոր խնդիրը, որի համար հէնց սկզբից քննադատում էինք եւ շարունակում ենք քննադատել ու յայտնել մեր մտահոգութիւնը իշխանութիւններին՝ դա մեր երկրում ստեղծուած ներքաղաքական իրավիճակն ու մթնոլորտն է: Իշխանութիւնները, փոխանակ մէջտեղ բերէին ազգային օրակարգ, դրա շուրջ համախմբէին ժողովրդին եւ աշխատէին ակնկալիքները, սպասումները բաւարարելու եւ երկիրն առաջ տանելու ուղղութեամբ, շատ կարճ ժամանակ անց հասարակութեանը բաժանեցին սեւերի եւ սպիտակների: Նրանց՝ ովքեր իշխանութիւնների կարծիքն ու տեսակէտները չեն կիսում՝ որակեցին հակայեղափոխականներ, եւ արդիւն-

քում, ցաւօք, մեր երկրում այսօր ստեղծուել է վատ մթնոլորտ, քաշուել են բաժանարար գծեր, եւ այն քաղաքական մշակոյթը, ժողովրդավարական արժէքները, քննարկման հարթակները, որ պէտք է լինէին մեր երկրում եւ քաղաքական դաշտում՝ այսօր բացակայում են: Սա վտանգաւոր է մեր պետութեան, երկրի յետագայ ժողովրդավարացման գործընթացի, նաեւ՝ ընդհանուր անվտանգութեան իմաստով, որովհետեւ հասարակութիւնն աւելի ու աւելի պառակտուում է: Այս իմաստով, իշխանութիւնների ամենամեծ բացը եւ սխալն այս ժամանակահատուածում այն էր, որ հասարակութեանը բաժանեցին տարբեր մասերի: Դրան գուզահեռ, անցած մէկ տարի ութ ամսուայ ընթացքում, երկրում լուրջ, համակարգային բարեփոխումներ չեն իրականացուել: Անշուշտ, փոքր յաջողութիւններ ունեցել է իշխանութիւնը, դրական երեւոյթներ կան, որոնք մենք երբեք չենք զլանում արձանագրել, բայց դրա կողքին չարուած եւ սխալ արուած աշխատանքներն այնքան մեծ են, որ այդ մէկ երկու երեք դրական փոփոխութիւններն աչքի չեն ընկնում:

**ՆԱՆԷ ԱԻԱԳԵԱՆ.-** Հասարակութեան մէջ բաժանարար գծեր, պառակտում արդեօք կատարուել է չի՞ որ եղել: Ի՞նչն է կատարել եւ ներկայ իրավիճակների տարբերութիւնը:

**ԻՇԽԱՆ ՍԱՂԱԹԵԼԵԱՆ.-** Նախկինում էլ կային այդ հարցերը եւ շատ վատ էր, որ կային: Երկրում տեղի է ունեցել իշխանութեան փոփոխութիւն, այն արատաւոր երեւոյթները որ նախկինում կային՝ դրանք այլեւս չլինելու ակնկալիքով: Այսինքն, եթէ նախկինում մի բան եղել է՝ վատ, այս իշխանութիւնները պէտք է այդ վատը չկրկնէին: Բայց կրկնում են, եւ աւելի կոպիտ ու սխալ ձեւերով: Հետեւաբար, այս իշխանութիւնների անգործութիւնը, սխալ իրականացումը քայքայել է արդարացնել նախորդ իշխանութիւնների ժամանակ տեղի ունեցած երեւոյթներով:

**ՆԱՆԷ ԱԻԱԳԵԱՆ.-** Վարչապետ Փաշինեանը վերջին ասուլիսի ժամանակ յայտարարեց, որ ամբողջ Դաշնակցութեան եւ ՀՀ կառավարութեան միջեւ չկան հակասութիւններ, այլ իրենք խնդիր ունեն ՀՅԴ հայաստանեան կառույցի, մասնաւորապէս՝ նախորդ իշխանութիւնների հետ համագործակցութիւն ունեցած հատուածի հետ: Վարչապետը նաեւ յայտարարեց՝ եթէ ՀՅԴ Հայաստանի կառույցում փոփոխութիւններ չլինեն՝ կառույցի այդ հատուածին սպասուում է մշուշոտ ապագայ: Ինչպէ՞ս արձագանգեցիք այս յայտարարութեանը, հաշուի առնելով նաեւ վարչապետի ակնարկը՝ Դաշնակցութեան հետ համագործակցութեան պատրաստակամութեան մասին:

**ԻՇԽԱՆ ՍԱՂԱԹԵԼԵԱՆ.-** Ով հարց ունի որեւէ դաշնակցականի հետ, եւ այդ հարցն անձնական չէ՝ ուրեմն գործ ունի ամբողջ Դաշնակցութեան հետ: Ձի կարող որեւէ մէկը՝ լինի դա ՀՀ վարչապետը կամ այլ կուսակցութեան ներկայացուցիչ, կամ որեւէ այլ անձ Դաշնակցութեան հետ խօսել այդ տոնով, այդ ձեւով, այդ ձեւաչափով: Ես չհասկացայ, դա վարչապետի կողմից սպառնալիք էր, թէ համագործակցութեան առաջարկ: Դաշնակցութիւնն առաջին օրուանից յայտարարել է, որ իր ամբողջ ներուժը, համահայկական ռեսուրսը եւ հնարաւորութիւնները դնելու է պետութեան տրամադրութեան ներքոյ, եւ շարունակելու է ծառայել Հայաստանի Հանրապետութեանը: Այս իմաստով, այո, մենք համագործակցել ենք ՀՀ պետութեան հետ եւ շարունակելու ենք, որովհետեւ մեր նպատակը՝ մեր ժողովրդին ծառայելն է: Բայց եթէ համագործակցութիւն ստեղծվի, նկատի ունեն մաս կազմել կառավարութեանը՝ դա պարզապէս հնարաւոր չէ, եւ ես դա ըստ էութեան բացառում եմ:

**ՆԱՆԷ ԱԻԱԳԵԱՆ.-** Ի՞նչ համագործակցութեան մասին է խօսքը:

**ԻՇԽԱՆ ՍԱՂԱԹԵԼԵԱՆ.-** Մեր պետութիւնը, արտաքին ճակատում, որտեղ որ հարց, գծաւորութիւն ունի, օգնութեան, օժանդակութեան կարիք ունի՝ մենք պետութեան կողքին ենք: Դա կը լինի Դաշնակցութեան համասփիւռ կառույցի, Հայ Դատի գրասենեակների միջոցով: Վերջին մէկ ու կէս տարուայ ընթացքում բազմաթիւ օտարերկրեայ պատուիրակութիւններ են ժամանել Հայաստան, Արցախ Հայ Դատի գրասենեակների անմիջական աշխատանքի շնորհիւ: Մենք նախորդ տարի Նոյեմբերին Արցախում կազմակերպեցինք միջազգային մեծ խորհրդաժողով: Մեր համայնքներն ակտիւօրէն (աշխուժօրէն-նմբ.) աշխատում են ՀՀ ղեկավարների, հիւպատոսների հետ՝ մեր երկրի շահերն ու Հայ Դատն

աշխարհում պաշտպանելու ուղղութեամբ: Դաշնակցութիւնն իր համահայկական կառույցներով, սոցիալական տարբեր ծրագրերի միջոցով Հայաստանում տարաբնոյթ օժանդակութիւն է յատկացնում: Այսինքն, այս իմաստով, անկախ նրանից, թէ ով է Հայաստանում իշխանութիւնը, շարունակելու ենք աշխատել պետութեան հետ, եւ այդ համագործակցութիւնը լինելու է: Բայց այլ ձեւաչափ այս պահին դեռ չեն պատկերացնում՝ յատկապէս այս պայմաններում, երբ պետութեանն ուղղուած մեր այս վերաբերմունքը ներկայի իշխանութիւններն ընկալում են որպէս դրսի ներսի Դաշնակցութեան քայլեր եւ տարբերութիւն դնում:

**ՆԱՆԷ ԱԻԱԳԵԱՆ.-** Վերջերս յատկապէս շատ է խօսուում Դաշնակցութեան Հայաստանի եւ Սփիւռքի տարբերութեան մասին: Կը յատկեցնէ՞ք:

**ԻՇԽԱՆ ՍԱՂԱԹԵԼԵԱՆ.-** Իշխանութիւններին թուում է, թէ տեղացիները վատն են, դրսիները լաւն են, եւ երբեմն առանց ամաչելու, առանց յայտարարութիւնների հետեւանքները գիտակցելու, չեն զլանում բացայայտ, երբեմն լկտի ձեւերով Դաշնակցութեանը որակումներ տալ, իրականութեանը չհամապատասխանող արտայայտութիւններ անել: Մենք, շատ յաճախ, յանուն երկրի ընդհանուր ներքին կայունութեան, մեծ դժուարութեամբ, ինչպէս հարկն է պատասխաններ չենք տալիս, բայց այդ համբերութիւնը երկար չի կարող լինել:

Չկայ «դուրս եւ ներս», եւ չի կարող լինել: Մենք համահայկական մեծ կառույց ենք, բազմաթիւ հարցերի շուրջ կարող ենք տարբեր տեսակէտներ ունենալ, քննարկումներ ունենալ, երբեմն նաեւ բաց քննարկումներ, տարբեր կարծիքներ յայտնել, բայց որ դրսի ներսի Դաշնակցութեան տարբերութիւն լինի կամ հիմնական հարցերի շուրջ սկզբունքային, մեծ տարածայնութիւն՝ չի կարող այդպէս լինել, որովհետեւ մենք մէկ ենք:

Ես վերջին ամիսների ընթացքում պատիւ եմ ունեցել լինելու Գանատայում, Լիբանանում, Եւրոպական տարբեր երկրներում եւ այժմ Միացեալ Նահանգներում եմ, արդէն մէկ շաբաթ է, չփուլում եմ այստեղի ընկերների հետ, ունենք բազմաթիւ մտահոգութիւններ տարբեր հարցերի շուրջ, տարբեր տեսակէտներ, բայց խորքում, հիմնական, սկզբունքային հարցերում մենք միասնական ենք եւ նոյնը:

**ՆԱՆԷ ԱԻԱԳԵԱՆ.-** Հայաստանում ներկայում ամենաարդիականը սահմանադրութեան փոփոխութեան հարցն է: Ինչն է եւ իշխանութիւնները ցանկալուում փոփոխել երկրի մայր օրէնքը: ՀՅԴն ի՞նչ դիրքորոշում ունի այս հարցում:

**ԻՇԽԱՆ ՍԱՂԱԹԵԼԵԱՆ.-** Մենք այն քաղաքական ուժերից ենք, որ դեռեւս Մայիսին զուշացրել էինք, թէ վարչապետի՝ դատարանները չըջափակելու կողն ինչպիսի բացասական հետեւանքներ կարող է ունենալ մեր երկրի համար: Անցնող տարուայ ընթացքում, իշխանութիւնները, դատական համակարգում որեւէ բարեփոխում չեն իրականացրել եւ չեն ծրագրել: Իշխանութիւնն այստեղ մի նպատակ ունի՝ դրաւել, նուաճել դատական համակարգը: Այդպէս արեց Բարձրագոյն դատական խորհրդի դէպքում՝ ստիպեց խորհրդի անդամներին հրաժարական տալ, ձեւաւորեցին նորը, եւ դա ներկայացուեց որպէս բարեփոխում: Նայէք այդ խորհրդի ներկայի կազմին եւ նախագահին, եւ կը հասկանաք, թէ իշխանութիւնները որքանով են անկեղծ իրենց յայտարարութիւններում: Նոյնը ցանկանում են անել Սահմանադրական դատարանի պայմաններում, ցանկանում են ունենալ վերահսկելի, իրենց կողմից ղեկավարուող եւ կառավարուող Սահմանադրական դատարան եւ առհասարակ դատական համակարգ: Այս իմաստով, ապօրինի ճնշումներ են գործադրում ՄԴ անդամների վրայ, որպէսզի նրանք հրաժարական տան, արդիւնքում ձեւաւորեն մի ՄԴ, որը 24 ժամ կը ծառայի իշխանութիւններին՝ դրանով խախտելով իշխանութեան ճիւղերի բաժանման, հաւասարակշռման հարցը: Դժբախտաբար, իշխանութիւնը շարունակում է գնալ այս ճանապարհով, եւ մենք ամբողջովին դէմ ենք: Մեր դիրքորոշումը ՄԴ անդամներին պաշտպանելու հարց չէ, այլ՝ երկիրը սահմանադրական կարգի տապալումից փրկելու հարց: Սրա մասին բազմիցս արտայայտուել ենք եւ յոյս ունենք, որ իշխանութիւնները կը գիտակցեն, կը հասկանան եւ յետ կը կազենն:



## King Abdullah of Jordan in Armenia for official visit

YEREVAN—The King of Jordan, His Majesty Abdullah II Ibn Al Hussein Al Hashimi arrived on February 10 in Armenia on an official visit at the invitation of Armenian President Armen Sarkissian.

King Abdullah II Ibn Al-Hussein is highly respected in the Islamic world; he is a representative of the Royal Hashemian dynasty, from the 41st generation of Prophet Muhammad, and was crowned on February 7, 1999.

Abdullah II is the guardian of the Christian and Islamic shrines in Jerusalem.

President Sarkissian and King of Jordan met in April 2019, during President Sarkissian's working visit to Jordan.

The President of Armenia invited the King of Jordan to visit Armenia. The official welcoming ceremony will take place at the Presidential Palace and will be followed by the meeting between President Sarkissian and King Abdullah II. The leaders of the two countries will also make a statement on the topic of Religion and Tolerance.

During his visit, the King of Jordan will also meet with Prime Minister Nikol Pashinyan, at the Holy See of Etchmiadzin he will be hosted by His Holiness, Catholicos of All Armenians and Supreme Patriarch Garegin II. The King of Jordan will also visit the Tsitsernakaberd, the Armenian Genocide Memorial.

## Armenian soprano dazzles at German event

DRESDEN—Armenian soprano Ruzan Mantashyan dazzled the audience at the SemperOpernball 2020 festival in Dresden on February 7 with a dramatic performance of Tatiana's aria from Tchaikovsky's Eugene Onegin opera.

Mantashyan became a household name last month after SemperOpernball organizers reneged her invitation when a Azerbaijani tenor Yusuf Eyvazov said he would not perform with the Armenian soprano because of her ethnicity. After many protests and confrontation from Mantashyan's agents, the singer was reinstated to the program

"I am happy that the performance took place and reached its logical and triumphant end," Mantashyan told Armenpress after the event.

Yerevan Komitas State Conservatory lecturer Margarine Sargsyan shared a video of Mantashyan's performance on Facebook, and praised the soprano. "This was truly brilliant. Well-done...This is our school," she said.

Other musicians who performed at the concert included violinist Pavel Milyukov, soprano Yulia Muzichenko and pianist Alexander Kashpurin, as well as the Azerbaijani Eyvazov.

## Jerusalem museum announces Armenian ceramics exhibition

JERUSALEM — The Rockefeller Museum of Jerusalem opened an exhibition dedicated to the 100th anniversary of the Armenian ceramics of Jerusalem, reported The Times of Israel.

Artist David Ohannessian and his British customer changed the face of the capital in the 1920s, and now Ohannessian's work is exhibited in the archaeological museum, as well as on the streets of the city.

In 1919, British Military Governor of Jerusalem Ronald Storrs asked the Ohannessian, who had previously worked in the U.K., to restore the glazed tiles on the outer walls of the Dome of the Rock in Jerusalem. Ohannessian accepted the invitation, and, along with the British, brought over Armenian art-

ists Neshan Balian and Megerdich Karakashian. All three had experience in glazed ceramic workshops in Turkey.

For several years, Governor Storrs and the Armenian artists changed the way Jerusalem looked. Armenians combined traditional ceramics with everything that is unique to Jerusalem. Today, Armenian Jerusalem ceramics can be seen in dozens of buildings throughout the city.

The Rockefeller Museum opened a new amazing exhibition last fall, displaying for visitors 100 years of Armenian ceramics. The curators called the exhibition "A Glimpse of Paradise" in honour of the fabulous fresco of the same name created by the late Marie Balian, the world-famous Armenian ceramic artist.

## Armenian Women's National Soccer Team holds first training session

YEREVAN—Armenia now has a women's national soccer team, which will be coached by Manuk Sargsyan. The team recently held its first three-day training in Yerevan, with a total of 28 players invited to participate in the training session, which was held from February 7 to 9 at the FFA Technical Centre.

## Constitutional Court referendum set for April 5

YEREVAN—President Armen Sarkissian over the last weekend signed a decree scheduling a referendum for April 5 to address the issue of Armenia's Constitutional court judges, effectively validating a controversial decision approved by parliament late last week, which left the fate of Constitutional Court judges in the hands of the voting public.

The referendum decision, introduced by the majority My Step party, handily passed parliament on February when the ruling party opted to pull from the agenda a version of the bill that would give parliament the green light to oust members of Armenia's high court. Instead, the My Step parliamentary faction introduced a measure that would bring their and the government's grievance with the high court judges to a referendum.

The Constitutional Court standoff has been criticized by opposition forces within and outside parliament, challenging the legality of the amendments proposed by the My Step bloc.

Under the proposed amendments, the court's chairman, Hrayr Tovmasyan, and six

other members installed by former Armenian governments would be replaced by other judges to be confirmed by the current parliament controlled by My Step.

Les coprésidents ont beau dire, il n'est pas question pour les dirigeants azerbaïdjanais de céder sur quoi que ce soit, ni sur les droits potentiels de la population vivant au Haut-Karabagh, et encore moins sur l'intégrité territoriale de l'Azerbaïdjan. Quant à la notion du droit des peuples à l'autodétermination, c'est une vue de l'esprit, tout au plus valable pour les démocraties occidentales, et encore ...

Rien ne progressera tant que les exigences de Bakou ne seront pas satisfaites, à commencer par le retrait des troupes arméniennes de la totalité des territoires occupés. En attendant ce moment hypothétique, on met sur le dos des arméniens tous les maux de la terre, réels ou imaginaires, quitte à en inventer de nouveaux. Le clan Aliev prépare sa population à la paix, mais à sa manière, à savoir: enseigner aux écoliers la haine des arméniens; récrire l'histoire en biffant toutes les exactions commises par la population et les troupes azéries; accuser sans preuves les arméniens de saccages culturels et religieux, pour cacher au mieux leurs propres destructions, tel le vieux cimetière de Djougha; et bien sûr maintenir sous pression les adultes en vue d'une guerre de reconquête.

C'est ce qui ressort [entre les lignes] de la énième rencontre infructueuse entre l'Arménie et l'Azerbaïdjan. Certes le ministre azerbaïdjanais Elmar Mammadiarov ne s'est pas exprimé avec des mots aussi crus, pas plus qu'il n'a détaillé le fond de sa pensée, mais les actes des dirigeants azéris depuis vingt ans le font pour lui.

Les coprésidents ont bien compris que leurs propositions (Trois principes de base et six éléments principaux) ne sont plus à l'ordre du jour et se concentrent donc sur des mesures permettant un début de commencement de négociations.

Le rôle et la mission des médiateurs n'est pas de juger le bien fondé de chaque partie, mais de trouver des éléments positifs pour parvenir à un terrain d'entente. Mais même là, leur travail s'avère quasi impossible, vu que l'une des parties veut tout pour elle et rien pour l'autre - En clair revenir à la situation d'avant 1988. C'est faire fi des pogroms, de la guerre, et de la défaite de l'Azerbaïdjan.

On finit par se demander pourquoi les grandes puissances, coprésidentes du groupe de Minsk de l'OSCE — États-Unis, Russie et France, membres permanents du Conseil de sécurité des Nations-Unis, — ont si peu de poids dans les négociations de paix du Haut-Karabagh?

La réponse semble évidente: Tout simplement parce qu'elles ne veulent pas peser sur les protagonistes, le statu quo leur convient, même si officiellement elles sont contre. Cette situation présente de multiples avantages pour elles:

1 — Tout d'abord elle permet aux pays médiateurs de commercer avec les protagonistes en toute sécurité, voire même de les fournir en matériels militaires, histoire de garder l'équilibre comme dit Moscou;

2 — Cela évite qu'un nouveau front s'ouvre et déséquilibre encore plus la situation catastrophique de la région, avec comme corollaire, l'implication directe de la Turquie — qui n'attend que cela depuis l'implosion de l'URSS, dans le conflit arméno-azerbaïdjanais;

3 — Sous l'appellation de 'négociations', elle permet aux parties de se rencontrer même si c'est pour un dialogue de sourds.

Dans ces conditions, le rôle des coprésidents se limitent quasi-exclusivement à éviter que la guerre reprenne. Ce qui est quand même non-négligeable.

D'où un appel à la raison, très 'soft', aux belligérants, sans jamais citer nommément le contrevenant, en espérant que le temps atténuera quelque peu la position maximaliste de certains.

## Ankara s'en prend au dirigeant de Chypre-Nord qui redoute une «annexion»

ANKARA—La Turquie a violemment critiqué le 10 février le dirigeant de Chypre-Nord Mustafa Akinci pour avoir déclaré la semaine dernière qu'il redoutait une dépendance croissante vis-à-vis d'Ankara susceptible d'aboutir à une «horrible» annexion.

Chypre est divisée depuis l'invasion, en 1974, de la partie septentrionale de l'île par l'armée turque, en réaction à un coup d'État visant à rattacher le pays à la Grèce. Le tiers nord de l'île est aujourd'hui contrôlé par l'autoproclamée République turque de Chypre-Nord (RTCN), uniquement reconnue par Ankara. Le reste du territoire forme la République de Chypre, membre de l'Union européenne.

Dans une interview publiée le 6 février par le journal britannique The Guardian, M.

Akinci a estimé que la réunification de l'île en un État fédéral était la «seule solution viable», ajoutant que l'hypothèse d'une annexion de la RTCN par Ankara était «horrible».

«Je ne serai pas un second Tayfur Sökmen», a-t-il ajouté, en référence au premier et unique président de l'éphémère République de Hatay, rattachée à la Turquie en 1939 après sa séparation de la Syrie sous mandat français.

Les commentaires de M. Akinci ont suscité l'ire du gouvernement turc. «Je n'ai jamais travaillé avec un responsable politique aussi peu honnête que M. Akinci», a tonné lundi le chef de la diplomatie turque Mevlüt Cavusoglu. «Il instrumentalise la Turquie à des fins électoralistes», a-t-il ajouté lors d'une

conférence de presse à Ankara.

La présidence turque avait déjà dénoncé les propos de M. Akinci, estimant que «le peuple turc lui infligerait une leçon» lors de l'élection présidentielle prévue fin avril à Chypre-Nord.

Les pourparlers inter-chypriotes sont à l'arrêt depuis l'échec en 2017 d'un round de négociations sous l'égide des Nations unies.

Chypre-Nord est économiquement et diplomatiquement dépendant du «grand frère» turc.

En octobre, M. Akinci s'était déjà attiré les foudres d'Ankara pour avoir critiqué une offensive turque dans le nord de la Syrie.

«Il a dépassé les bornes», avait estimé le président Recep Tayyip Erdogan.

(AFP)

## Vanetsian se lance en politique pour contrer Pachinian

EREVAN—Artur Vanetsian, l'ancien chef du service de sécurité le plus puissant d'Arménie, a annoncé son entrée en politique, révélant qu'il allait créer un parti pour défier le gouvernement du Premier ministre Nikol Pachinian.

Dans une entrevue accordée aux rédacteurs en chef de neuf journaux arméniens publiée le 6 février, Vanetsian a expliqué que le parti s'efforcera de réfuter les affirmations du gouvernement selon lesquelles les anciens dirigeants du pays sont les principaux rivaux politiques des autorités actuelles.

«Une pratique très importante a émergé en Arménie, qui est appelée la division de

la société en Blancs [politiques pro-gouvernementaux] et en Noirs [d'opposition], a-t-il pointé du doigt. «Je pense que c'est un faux programme politique qui a été introduit dans notre paysage; un programme politique selon lequel les anciens dirigeants sont l'alternative aux autorités actuelles. Je peux vous assurer qu'il n'y a rien de tel». «Il n'y aura pas de retour vers le passé, a ajouté Vanetsian. Je suis quelqu'un qui se battra contre un retour vers le passé».

Pachinian a nommé Vanetsian directeur du Service national de sécurité (SNS), immédiatement après son arrivée au pouvoir lors de la Révolution de velours d'avril-mai 2018.

Vanetsian avait travaillé comme chef adjoint de la division d'Erevan du SNS jusqu'à la révolution. Il est rapidement devenu l'un des membres les plus influents de l'entourage de Pachinian, supervisant un certain nombre d'enquêtes de corruption très médiatisées lancées par les nouvelles autorités.

Vanetsian a été relevé de ses fonctions de façon inattendue en septembre, quelques mois seulement après avoir été promu au grade de général du SNS. Il a critiqué le style de leadership «impulsif» de Pachinian après son limogeage, déclenchant une guerre des mots amère avec le Premier ministre.

(RFE/RL)

## VICTOIRE...

suite de la page F1

d'habitants.

«Aliev a choisi d'organiser des élections avec huit mois d'avance car il craint que l'esprit protestataire ne grandisse», a-t-il expliqué à l'AFP.

«Le remaniement gouvernemental et les élections anticipées ont le même objectif, prolonger le règne d'Aliev», ajoute l'expert.

Très dépendant de ses exportations de pétrole, l'Azerbaïdjan a souffert de la baisse du prix du baril. Après la chute de ce dernier en 2014, la monnaie nationale a perdu la moitié de sa valeur et le pays a connu la récession et une inflation à deux chiffres. La situation s'est stabilisée mais la croissance stagne désormais autour de 1-2 %.

## CONTRÔLE SANS PARTAGE

Ilham Aliev veut préserver son contrôle sans partage, accuse l'opposition. Il a placé sa femme Mehriban au poste de première vice-présidente du pays en février 2017, et leur fils, Heydar, âgé d'une vingtaine d'années, est vu comme son possible successeur.

S'il est critiqué par l'opposition et les défenseurs des droits de l'Homme, le président Aliev est loué par ses partisans pour avoir, grâce à la manne des hydrocarbures, transformé et modernisé l'Azerbaïdjan en une puissance

énergétique indépendante.

Une dirigeante du parti au pouvoir, Bahar Mouradova, a assuré que les autorités avaient tout fait pour que les élections «se tiennent dans un environnement démocratique».

Des assurances rejetées par l'opposition. «Ce sera une imitation d'élection», avait lancé Ali Karimli, dirigeant du Front populaire qui boycottait le scrutin.

Un autre opposant, Issa Gambar, du parti Moussavat, a également dénoncé les restrictions très sévères au droit de manifester en Azerbaïdjan, où «les gens sont arrêtés et torturés».

Plus de 1.300 candidats de 19 partis se présentaient pour se partager les 125 sièges du parlement monocaméral, le Milli Majlis.

Aucune élection depuis l'arrivée au pouvoir d'Ilham Aliev n'a été reconnue comme libre et démocratique par les missions d'observation de l'Organisation pour la sécurité et la coopération en Europe (OSCE), qui disposait cette fois-ci encore de 350 observateurs dans le pays.

## L'OSCE DOUTE DE L'«HONNÊTETÉ» DES RÉSULTATS

Des doutes pèsent sur l'honnêteté des résultats des législatives anticipées en Azer-

baïdjan, remportées par le parti au pouvoir et où l'opposition n'a eu qu'un siège, a jugé la mission d'observation électorale de l'OSCE au lendemain du scrutin.

«Des violations significatives de procédure lors du décompte (des voix) et de la tabulation (des résultats) suscitent des doutes quant à l'honnêteté des résultats», a-t-elle indiqué dans un communiqué.

«La législation et l'environnement politique restrictifs ont empêché une véritable compétition» électorale, a estimé la mission d'observation électorale de l'OSCE dans le communiqué, en affirmant que les «électeurs n'avaient eu pas de choix réel».

Même si plus de 1.300 candidats de 19 partis ont participé au scrutin, «la campagne électorale était imperceptible à cause d'un environnement politique sous contrôle», assure encore l'Organisation pour la sécurité et la coopération en Europe.

Au pouvoir en Azerbaïdjan depuis 2003, Ilham Aliev est souvent critiqué par l'opposition et les défenseurs des droits de l'Homme qui l'accusent de répression de la liberté d'expression dans le pays.

«Malgré les garanties constitutionnelles pour la liberté d'expression et l'accès libre à l'information, ces derniers sont drastiquement restreints par la législation», rappelle le communiqué.

(AFP)



L'Association arménienne éducative et culturelle  
Hamazkayin du Québec  
Sous le Haut patronage de Son Eminence  
Archevêque Papken Tcharian

Vous invite au  
Lancement du livre et exposition artistique

RÉTROSPECTIVE  
**AGOPIAN**  
1964 -2017

Vernissage  
Vendredi 21 février 2020 à 20h  
L'exposition se poursuit

Samedi 22 février de 14h à 18h, Dimanche 23 février de 11h à 15h  
Samedi 29 février de 14h à 18h, Dimanche 1 er mars de 11h à 15h

Centre Arman Garo et Chaké Gunjian  
3480, rue Olivier-Asselin  
Montréal, QC, H4J 1L6

1968 Auto-portrait 48x36cm Mixed media on board

## ԸՆԿԵՐԱԿԱՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ Ըլլա՛լ

Անոնք կը յայտնուէին ազգի մը պատմութեան վճռորոշ մէկ պահուն՝ իրավիճակի մը որպէս հակազդեցութիւն, կը կատարեն,— կամ չեն յաջողիր կատարել,— իրենց առաքելութիւնը, ապա կ'անհետանան պատմութեան բեմէն։ Ուրիշ վճռորոշ պահու մը, նոր իրավիճակի մը որպէս հետեւանք՝ տարբեր կուսակցութիւններ կը կազմուին, տարբեր կուսակցութիւններ կը գործեն, եւ այսպէս կը թաւալի ազգի մը կեանքը։

Տարբեր չէ եղած իրականութիւնը եւ մեր պարագային։ Չեմ ուզեր երթալ դարերու խորքը այս ըսածս հաստատելու համար։ Փաստօրէն այլ կուսակցութիւններ գոյութիւն չունէին,— մեր պետականութեան կորուստէն ետք երկա՛ր ժամանակ գոյութիւն չէին ունեցած,— երբ ժԹ. դարու վերջին տասնամեակներուն ծնունդ առին երեք կուսակցութիւններ՝ Արմենականները, Հնչակեաններն ու Դաշնակցութիւնը՝ ի պատասխան այն անմարդկային պայմաններուն, որոնց մէջ կ'ապրէր հայ ժողովուրդը իր սեփական հողերուն իսկ վրայ։ Պէ՛տք է ըմբոստանար հայութիւնը, պէ՛տք է պաշտպանէր ինքզինք, պէ՛տք է տէր կանգնէր այս երկնքին տակ բոլոր այլ ազգերու կարգին մարդավայել ապրելու իր հիմնական իրաւունքներուն։ Ահա թէ ինչո՛ւ կազմուեցան այդ կուսակցութիւնները։

Արիւնոտ պայքարի գոյամարտն էր, որ կը թեւակոխէինք։ Միայն գէնքով կար հայուն փրկութիւն…

Այդ կացութեան մէջ, որքան ալ ազնուական նպատակ կը հետապնդէին՝ կրթութեան ճամբով իրականացնելու հայութեան ազատագրութիւնն ու զարթօնքը, Արմենականները դժբախտաբար երկար չզիմացան։

Հնչակեաններն ալ, իրենց սկզբնական տարագումով, նոյնպէս երկար չզիմացան, երկպառակտուեցան, վերակազմուեցան եւ առաւել կամ նուազ տարողութեամբ շարունակեցին դերակատար մնալ հայ կեանքին մէջ։

Հետագային արմենական կուսակցութեան եւ

հնչակեան կուսակցութեան մէկ թեւի վերապրողներէն կազմաւորուեցան Ռամկավարները։

Դաշնակցութիւնը ծնաւ երբ արդէն հրապարակի վրայ էին միւս երկու կուսակցութիւնները։ Ծնաւ միացնելո՛ւ, համախմբելո՛ւ համար յեղափոխականները եւ աւելի ուժեղ հաւաքական ուժ մը մէջտեղ բերելու առաջադրութեամբ։ Դժբախտաբար նպատակակէտերու եւ մօտեցումներու տարբերութիւնները արգելք հանդիսացան, որ գոյանայ այդ միաձուլումը, եւ յեղափոխականներու դաշնակցութեան տեղ յառաջացաւ Հայ յեղափոխական դաշնակցութիւնը, որ հանդիսացաւ գոյամարտը առաջնորդող գլխաւոր ուժը։

Ան նաեւ հանդիսացաւ Մեծ եղեռնէն փրկուած հայութեան կենաց–մահու գուպարին՝ Սարգարապատի, Բաշ–Ապարանի ու Ղարաքիլիսէի դիւցազնամարտերու առանցքը եւ հայ պետականութեան վերահաստատման՝ Հայաստանի Հանրապետութեան գոյաւման հիմնական ազդակը։ Հերոսամարտերը Դաշնակցութեան մենաշնորհը չէին, ամբողջ հայութիւնն էր ոտքի ելած, իսկ պետական կեանքին մասնակից էին արդէն գոյութիւն ունեցող թէ այլ նորակազմ կուսակցութիւններ։ Գիտենք, սակայն, թէ ժողովրդավար կարգերը նոյնպէս երկար չտեւեցին, թշնամիները թոյլ չտուին, որ երկար տեւեն։

Խորհրդայնացումէն ետք, աւանդական միւս կուսակցութիւններուն հետ, Դաշնակցութիւնն ալ դարձաւ տարազերի, գրկուեցաւ հայրենի հողին վրայ գործելու իրաւասութենէն ու պատհուութենէն։

Գոյամարտը սակայն չէր աւարտած։ Աշխարհացրիւ հայութեան պայքարը պիտի մղուէր տարբեր ճակատներու վրայ, այս անգամ հայրենի հողէն դուրս վերապրելու, ուժերը վերագտնելու եւ իր իրաւունքները հետապնդելու ի խնդիր։

Անգամ մը եւս Դաշնակցութիւնը պիտի կարենար ճակատադրական դեր խաղալ իր ժողովուրդի կեանքին մէջ, ընդդիմանալ մեզ ջլատող արտաքին ուժերուն, վառ պահել Ազատ, Անկախ ու Միացեալ Հայաստանի երազը, տէր կանգնիլ անոր խորհրդանիշերուն՝ Եռագոյնին, օրհ–

● ● ● ←

ՆԱՆԷ ԱԻԱԳԵԱՆ.– Ի՞նչ միջոցներ էֆ ձեռնարկել հարցի մասին ձեր կարծիքը հանրութեանն ու իշխանութիւններին ներկայացնելու համար։

ԻՇԽԱՆ ՍԱՂԱԹԵԼԵԱՆ.– Տարբեր միջոցներով ենք ներկայացրել մեր տեսակէտը, այդ թուում՝ նախորդ տարուայ ամրանը եօթ կուսակցութիւնների հետ միասին յայտարարութիւնը, միաժամանակ մասնակցել ենք միջոռացումների։ Դատական համակարգում բարեփոխումների իշխանութիւնների նախատեսած քայլերի քննադատութեանը զուգահեռ ներկայացրել ենք նաեւ մեր պատկերացումները բաւական ծաւալուն փաստաթղթի միջոցով։ Ընդ որում, շատ կարեւոր է նշել, որ մենք երբեք հիացած չենք եղել Հայաստանի դատական համակարգի գործունէութեամբ եւ բազմաթիւ անգամներ բարձրաձայնել ենք։ 2016 թուականին Հանրապետական կուսակցութեան հետ կնքուած յուշագրի կէտերից մէկը հէնց դա էր, որ դատական համակարգում կան մի շարք հարցեր, որոնք պէտք է լուծուեն։ Հիւսմ էլ բարձրաձայնում ենք, որ իշխանութիւնները գնում են ոչ թէ այս հարցը լուծելու ճանապարհով, այլ՝ պարզապէս ցանկանում են ունենալ սեփական դատարաններ եւ վերջ։

ՆԱՆԷ ԱԻԱԳԵԱՆ.– ԷՅԳՆ նշում է հիմնադրման 129րդ ամեակը։ Այսօր ի՞նչ մարտահրաւէրներ կան համահայկական կառոյցի առջեւ։

ԻՇԽԱՆ ՍԱՂԱԹԵԼԵԱՆ.– Մարտահրաւէրները միշտ են եղել, եւ այսօր եւս կան։ Տարբեր երկրներում դրանք տարբեր են։ Օրինակ այսօր, Լիբանանում կուսակցութեան խնդիրներն այլ են, որովհետեւ երկիրը վտանգի մէջ է։ Բայց ընդհանուր առմամբ, հիմնական մարտահրաւէրները, որ ամբողջ աշխարհում ունենք, դա ժողովրդային աւելի լայն զանգուածների հետ մեր աշխատանքը կազմակերպելն է։ Դաշնակցութիւնը, լինելով ազգային կուսակցութիւն՝ երբեք իր առջեւ խնդիր չի դրել, նոյնը նաեւ Հայաստանում, իր շարքերը համալրել մեծ քանակութեամբ մարդկանցով։ Հայաստանում եղել ենք իշխանութիւն, ընդդիմութիւն, բայց մեր շարքերի թիւը գրեթէ միշտ նոյնն է եղել՝ 5–6 հազարի շրջանակներում։ Այսինքն, մենք երբեք մեր առջեւ նպատակ չենք դրել մեծաթիւ մարդկանց ընդգրկել մեր շարքերը։ Նաեւ, վերջին փորձութիւնները ցոյց տուեցին, որ ճիշդ ենք եղել, որովհետեւ Հայաստանում եղել են կուսակցութիւններ, որ ունեցել են 180 հազար անդամ եւ այսօր նոյ–

նիսկ 20 հոգի չուենն։

Այսօր կարեւոր ենք համարում աւելի լայն զանգուածների հետ աշխատանքը՝ յատկապէս երիտասարդների, ոչ միայն Հայաստանում, այլեւ ամբողջ աշխարհում, որովհետեւ մեր աշխատանքին նոր կեանք, նոր թափ, նոր լիցք հաղորդելու համար շատ կարեւոր է, որ մեր շարքերը համալրուեն մեծ քանակութեամբ, լաւ կրթութիւն ստացած, իրենց հայրենիքը սիրող երիտասարդներով, որ մեր պայքարին նոր թափ տանք։

Անշուշտ աշխարհը փոխուել է, ժամանակները փոխուել են եւ երիտասարդութիւնն էլ այլ է։ Ամբողջ աշխարհում փորձում են ազգային գաղափարախօսութիւն ունեցող ուժերին ներկայացնել որպէս յետամնաց, աւանդական ազգային արժէքները պահպանող եւ զարգացնող մարդիկ, բայց վստահեցնում եմ, որ ազգային գաղափարախօսութիւն կրող մարդիկ ամենաժամանակակիցն են, ազգային գաղափարախօսութիւնը ամենաժամանակակիցն է, որովհետեւ դա ընդունելու, հասկանալու, կրելու համար պէտք է ճանաչես քո ժողովրդին, պատմութիւնը, մշակոյթը, հաւատքը, իսկ այս իմաստով, դժբախտաբար, դա ոչ բոլորի մօտ է։ Հետեւաբար, Դաշնակցութիւնն ունի մի շարք մարտահրաւէրներ, եւ որքան մարտահրաւէր՝ այնքան աշխատանք, կամք, վճռականութիւն, որ այս 130 տարիների ընթացքում արել ենք, եւ շարունակելու ենք։

ՆԱՆԷ ԱԻԱԳԵԱՆ.– Ազգային ուժերի նկատմամբ վերաբերմունքի պայմաններում, ձեզ յաջողւո՞ւմ է ապահովել սերնդափոխութիւն։

ԻՇԽԱՆ ՍԱՂԱԹԵԼԵԱՆ.– Անկեղծ ասած, ունենք դժուարութիւններ։ Ինչպէս նշեցի, դա համընդհանուր խնդիր է, բայց այսօր Հայաստանում, ՀՅԴ ղեկավար հանդիսացող Գերագոյն մարմինը մեծամասնութեամբ համալրուած է երիտասարդներով, որոնց մի մասին մեր հանրութիւնը առիթ ունեցել է վերջին տարիներին մօտիկից ճանաչելու, ակնաստես լինելու նրանց գործունէութեանը։ Ունենք երիտասարդական, ուսանողական միութիւններ, որոնք մեր լաւագոյն ճանապարհն են սերնդափոխութիւն իրականացնելու։

ՆԱՆԷ ԱԻԱԳԵԱՆ.– Վերջին շրջանում, բաւական հնչեղութիւն ստացան ՀՅԴի համահայկական կառոյցից արտախումբերի դէպքերը, կամաւոր հեռացողներ եղան։ Իճնո՞վ էր պայմանաւորուած։ Արդեօք երիտասարդներին հնարաւորութիւն տրւո՞ւմ է ազատօրէն

ներգրին ու գինանշանին։ Միւս կուսակցութիւնները, հայապահպանման գործին իրենց մեծ ներդումը ունենալով հանդերձ, դժբախտաբար ենթարկուեցան արտաքին ճնշումներուն, չկրցան ցուցաբերել նոյն հաւատարմութիւնը մեր գոյութենական այդ կռուաններուն։

Վերանկախութիւնը մեզ բոլորս դրաւ նոր իրավիճակի մը դէմ–յանդիման։ Աւանդական երեք կուսակցութիւնները, իրենց ներքին բոլոր վերիվայրումներով, ցնցումներով եւ դժուարութիւններով հանդերձ վերատին համախմբուեցան պետականութեան շուրջ, նուազագոյնը՝ պետականութեան գաղափարին ու անոր ամրակայման անհրաժեշտութեան զգացողութեան շուրջ։

Ճիշտ է, պատրաստ չէինք վերստանձնելու սեփական պետութիւն վարելու պատասխանատուութիւնը։ Փորձը չկար, փորձառութիւնը չկար, մարդուժը չկար՝ ոչ հայրենիքի մէջ, ոչ ալ անկէ դուրս։ Եւ կար երկրաշարժ, իր յամեցող հետեւանքներով, կար նոր եղեռն՝ նախկին եղբայրակա՛ն հանրապետութեան մէջ, կար պատերազմ ու նոր դիւզազնամարտ, կար արեամբ նուաճուած յաղթանակ ու գալն որեւէ ատեն կորսնցնելու վտանգ։ Կա՛յ մինչեւ հիմա։ Ճակատամարտը դադրած է, պատերազմը կը շարունակուի։

Անկախութեան այս անցնող երեսնամեակը ցոյց տուաւ, որ մեր կուսակցութիւնները, աւանդականները՝ սկսեալ Հ.Յ.Դ.–էն եւ դեռ նոր ծնող կուսակցութիւնները եւս ընելիք ունին, տակաւին ընելիք ունին, շատ ընելիք ունին, եւ ի զուր են կոչերը հիները հանգստեան կոչելու, հրապարակը նորբերուն ձգելու։ Այդ նորբեր թող գան, թող փաստեն իրենք գիրենք, թող տէր կանգնին այս ազգին եւ փոխարինեն հիները, եթէ կրնան։

Առ այժմ սակայն թող ոչ ոք յաւակնի ըսել, որ անելիք չուենին անոնք՝ աւանդականները։ Անոնց՝ Դաշնակցութեան թէ միւսներուն պարտքն է տակաւին, առաքելութի՛ւնն է՝

— Ըլլա՛լ։

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ

արտայայտուել, պահպանելով Դաշնակցութեան աւանդոյթները, գաղափարներն ու սկզբունքները, նաեւ կատարել նորամուծութիւններ, որոնք իրենց կարծիքով անհրաժեշտ են։

ԻՇԽԱՆ ՍԱՂԱԹԵԼԵԱՆ.– Հեռացման մասին շատ եմ խօսել, եւ չէի ցանկանայ անդրադառնալ, բայց կը ցանկանայի նշել, որ տեղեկութիւնները, թէ հեռացել են յիսուն վաթսուն հոգի՝ չի համապատասխանում իրականութեանը։ Այդ թիւը շատ աւելի քիչ է, գտնուել են երիտասարդներ, որոնք խախտել են կուսակցութեան կանոնադիրը, չեմ ցանկանում մանրամասների մէջ մտնել, եւ նրանք ստացել են իրենց պատիժը։

Միաժամանակ, կը ցանկանայի անդրադառնալ այն մտքերին, թէ Դաշնակցութեան մէջ չկայ ժողովրդավարութիւն, բռնանում են, վերջերս նաեւ հակադաշնակացական մամուլն ու քարոզչութիւնը փորձում են ներկայացնել, որ երիտասարդներին, մտաւորականներին հեռացնում են, նման բան պարզապէս չկայ։ Չգիտեմ այլ կուսակցութիւն Հայաստանում, որը երիտասարդների արտայայտուելու այդքան մեծ լիազօրութիւն եւ անհատական նախաձեռնութիւնների համար այդքան մեծ ինքնուրոյնութիւն ընձեռել։ Երիտասարդներից շատերը ներգրաւուած են եղել մեր բազմաթիւ յանձնախմբերում, կուսակցութիւնը նրանց համար ստեղծել է ինքնադրսեւորուելու բազմաթիւ հնարաւորութիւններ, ոմանք հասկացել են, եւ ոմանք չեն գիտակցել։ Բայց մի բան ձեզ վստահեցնում եմ, որ մեր կառոյցում, Հայաստանում եւ համոզուած եմ Սփիւռքում, երիտասարդութիւնն առանձնայատուկ դերակատարութիւն ունի կուսակցութեան մէջ։ Նոյնիսկ մեր կուսակցութեան կանոնագրով, Դաշնակցութեան ուսանողական միութիւններին յատուկ քուտտա (մաս–խմբ.) է տրուած ուղղակիօրէն Դաշնակցութեան ընդհանուր, բարձրագոյն ժողովին մասնակցելու համար։ Այդ աւանդոյթն ի դէպ եղել է, երբ առաջին ուսանողական միութիւնն է ստեղծուել, այսինքն՝ 130 տարի առաջ էլ Դաշնակցութիւնն իր ուսանողական միութեանը կարեւորելու եւ արժեւորելու համար ստեղծել է այդ առիթը, եւ այդ աւանդոյթները մինչ այժմ կան եւ գործում են։ Այսինքն, մենք երիտասարդներին տեղ տուող, մեծապէս կարեւորող կուսակցութիւն ենք բայց իւրաքանչիւրը դա պէտք է վաստակի։

# Օրական Կէս Ժամ Քալելու Բարիքները

Ստորեւ կը ներկայացնենք օրական կէս ժամ քալելու բարիքները: Կ'արժէ մտածել:

- 1.- Կը պակսեցնէ սրտի տաքնապի հաւանականութիւնը:
- 2.- Կ'աշխուժացնէ արեան շրջադաշտութիւնը:
- 3.- Կ'օգնէ բարեկարգման:
- 4.- Կը թեթեւցնէ ընկճախտը:
- 5.- Կը կազդուէ:
- 6.- Արգելք կը հանդիսանայ գիրութեան:
- 7.- Կը թեթեւցնէ անձկութիւնը:
- 8.- Կ'ապահովէ թոքերու լաւ գործունէութիւնը:
- 9.- Կ'օգնէ, որպէսզի Տէ. կենսանիւթը մարմնէն ներս թափանցէ:
- 10.- Կը պակսեցնէ կարգ մը քաղցկեղներու հաւանականութիւնը:
- 11.- Կը բարելաւէ քունը:
- 12.- Կը նուազեցնէ շաքարախտի հաւանականութիւնը:
- 13.- Կը խթանէ ստեղծագործ միտքը:
- 14.- Կը գորացնէ ոսկորներն ու մկանները:
- 15.- Կը բարելաւէ արեան գերձնշումը:
- 16.- Կը բարելաւէ մարմնին դիմադրականութիւնը:
- 17.- Կը բարելաւէ մարմնին հաւասարակշռութիւնը:



## Քալելու Հաճոյք է

Մենք կրնանք քալել առանձին, ընտանեօք կամ բարեկամներով: Քալելով՝ կրնանք յայտնաբերել նոր թաղեր, փողոցներ, հանրային պարտէզներ, ծովափներ եւ այլն...

Մաքուր օդին քալելով, թարմ թթուածին շնչելով՝ կը սնուցանենք մեր ուղեղը եւ կը թարմացնենք մեր միտքը:

Առատեան քալելու պարագային, օրը կը սկսինք բարձր տրամադրութեամբ եւ լաւատեսութեամբ:

## Ճիշդ Քայլեր

Մասնագէտներու կարծիքով, շատեր սխալ կը քալեն. անոնք անտեղի կը պրկեն ու կը յոգնեցնեն իրենց ոտքի եւ կոնքի մկանները եւ կը վնասեն ողնաշարին:

Կրունկին վրայ յենելով քայլ նետելը շատ տարածուած, սակայն սխալ ձև է: Ճիշդ ձևը ոտնաթափի առաջամասին վրայ յենելով քալելն է: Այս ձևը որդեգրելու համար քանի մը օր պէտք է մարզուիլ, որմէ ետք քալելը հաճոյքի պիտի վերածուի եւ պիտի զօրանան սրունքի, գիտի եւ կոնքի մկանները:

# Մեր Զաւակները Եւ Մենք. Ինչպէ՞ս Օգնել Երեխային, Որպէսզի Յաղթահարէ Իր Դժուարութիւնները

Նախ շեշտենք, որ որեւէ դժուարութեան դիմաց անհանգստութիւնը բացասական զգացում է: Բնական է, երբ կ'անհանգստանանք որեւէ բանի համար, եւ ատիկա կրնայ դրականօրէն ազդել մեր զարգացման վրայ:

Նոյն տրամաբանութեամբ, բնական է եւ պէտք է որ երեխան անհանգստանայ, երբ ժամանակին չ'աւարտեր իր տնային աշխատանքները, երբ կը ստանայ ձախող նիշեր եւ այլն... Ատիկա կրնայ խթանել զինք՝ բարեփոխելու համար իր ուսումնական վիճակը:

Անհանգստութիւնը վտանգաւոր կը դառնայ, երբ անիկա կը սկսի բացասականօրէն ազդել երեխային ամէնօրեայ տրամադրութեան, վարքին վրայ:

Անհանգստութիւն Պատճառող Իրավիճակներ

Եկէք՝ ծանօթանանք երեխային մէջ անհանգստութեան զգացում յառաջացնող իրավիճակներուն:

- Հասարակութեան մէջ ներգրավուելու դժուարութիւններ,
- Մանրաբեռնուած ուսումնական տարի,
- Ֆիզիքական ծանրաբեռնուածութիւն,
- Կեանքին մէջ էական փոփոխութիւններ՝ դպրոցի փոփոխութիւն, երկրի փոփոխութիւն, ծնողքի ամուսնալուծում,
- Հարագատի կորուստ:

Վերոյիշեալ բոլոր իրավիճակները կրնան եւ պէտք է երեխային մէջ անհանգստութիւն յառաջացնեն, սակայն պէտք է որ օրերով մտատանջուի: Այնպէս որ, ծնողները պէտք է ուսումնասիրեն իրենց գաւկիւն վարքը՝ ընկճախտի յառաջացումը կանխելու նպատակով:

Ուշադիր եղէք, եթէ. երեխային մօտ վարքագիծի բացասական փոփոխութիւն եւ տրամադրութեան անկում կը նկատէք, երեխան խորժակ չունի, երեխային քունը խանգարուած է, երեխան աշխուժ, կայտառ է, երեխան առանց պատճառի տխուր է եւ յաճախ կու լայ,

Երեխան չի կեղրոնանար, երեխան յաճախ սրտխառնուք, թուլութիւն եւ մկանային ցաւ ունի, երեխան բացասական վերաբերմունք ունի շրջապատին եւ դպրոցին նկատմամբ:

## Ինչպէ՞ս Օգնել Երեխային

1.- Խօսեցէ՛ք երեխային հետ, հարցումներ ուղղեցէ՛ք. հարցումներ, որոնք չ'սահմանափակուին միայն «այո» կամ «ոչ» պատասխաններով: Ուշադիր մտիկ ըրէ՛ք եւ փորձեցէ՛ք հասկնալ, թէ ի՞նչ բան է վրդոված է, ո՞րն է անոր մտահոգութեան պատճառը:

2.- Օրինակներ բերէ՛ք: Բացարեցէ՛ք, որ դուք ալ երբեմն կ'անհանգստանաք, բայց կը փորձէք ելքեր գտնել: Դուք ձեզ պաղարիւն եւ հանգիստ ձեւացուցէ՛ք, երբ ձեր երեխան անհանգիստ վիճակի մէջ է: Ուշադիր. պաղարիւնութիւնը անտարբերութիւն չի նշանակիր:

3.- Հետեւողական եղէ՛ք: Այս աշխարհին մէջ, ուր ամէն բան կրնայ անկանխատեսելի եւ յանկարծակի ըլլալ, անհրաժեշտ է հետեւողականութիւն ցուցաբերել ամէնուր՝ քնանալու, խաղալու, ուտելու, սորվելու եւ հանգստանալու ժամերուն: Ձեր հետեւողականութիւնն ու սիրոյ արտայայտութիւնը կայունութեան եւ ապահովութեան զգացում կը ստեղծեն երեխային մօտ:

4.- Մարզեցէ՛ք ձեր երեխան՝ հանգստացնող վարժութիւններով: Երբ ան անհանգիստ է, վարժեցուցէ՛ք, որ խոր շունչ քաշէ, մտքէն մինչեւ ութ հաշուէ եւ արտաշնչէ: Այսպիսի մարզանքներ միասին կատարեցէ՛ք:

5.- Խօսեցէ՛ք բժիշկին հետ: Երբ տեսնէք, որ երեխային մօտ վիճակի որեւէ բարեփոխում չկայ, եւ ան կը շարունակէ մնալ ջղային, անտրամադիր, քնկոտ, թոյլ եւ լուռ, առանց ժամանակ կորսնցնելու՝ դիմեցէ՛ք մանկաբուժին խորհուրդին եւ ցուցմունքներուն:

 <p><b>Aline Shnorhokian</b> Mortgage Advisor Tel: 1 866 231-8876 Fax: 450 688-7555 Cell: 514 797-1375 aline.shnorhokian@cibc.com</p>	 <p><b>ALBERT ARKILANIAN</b> (Courtier immobilier résidentiel) Residential Real Estate Broker aarkilanian@sutton.com Cell: 514.962.8822 Bur: 514.426.9595 Fax: 514.426.9596 *certaines conditions s'appliquent</p>	 <p><b>Tro Bachekjian</b> Représentant des ventes Véhicules d'occasion Pre-owned Sales Consultant tbachekjian@gabriel.ca Tél : 514 327-7777 Poste : 4139 Télécc. : 514 262-8019</p>
 <p><b>École De Conduite</b> Driving School Tel: 514-336-1110 Moniteur-Instructeur AUTOECOLEAZIG@HOTMAIL.COM 1400, rue Sauvé O, Montréal, QC H4N 1C5, Suite 1438 Centre Adonis II</p>	 <p>Personal &amp; Corporate Tax Returns Financial Statements Bookkeeping Business Plan <b>NATALIE SKAFF, CPA, CGA</b> Comptable Professionnelle Agréée   Chartered Professional Accountant nat.skaff@gmail.com Tel. (514) 963 3363 2866 Rue De Chamoniex Saint-Laurent, Québec H4R 3B7</p>	 <p><b>BRING YOUR OWN WINE</b> <b>NAZARETH</b> CLASSIC GRILL 550 Curé Labelle, suite 17, Ste-Rose, QC H7L 4V6 Tel: 450.937.4064 Email: resto.nazareth@hotmail.com</p>
<p><b>SAMUEL TOPALIAN</b> 450 682-1644</p> <p><b>AUTO SAMSON</b></p>  <p>MÉCANIQUE GÉNÉRALE - REMORQUAGE SERVICE DE PNEUS MISE AU POINT 4700 BOUL. SAMSON, CHOMEDEY LAVAL, QC.</p>	 <p><b>ՀԱՅԿ ԿԱՐՊՈՒՆԵԱՆ</b> <b>Hayk Hartounian</b> Courtier immobilier résidentiel Residential Real Estate Broker C 514.574.6162 B 514.333.3000</p>	 <p><b>NETTOYEUR MARIE-CLAIRE</b> <b>CUEILLETTE ET LIVRAISON GRATUITE</b> À DOMICILE ET AU BUREAU (MONTRÉAL ET LAVAL) 2535 de Salaberry, Montréal Tél: 514.334.7830</p>



**ԳՐԱԻՈՒԱՄ ԹՈՒԱԿԱՆՆԵՐ**

**ՀՕՄ-ի Մոնթրեալի և Լաուալի մասնաճյուղերու Կանանց միջազգային օրուայ միացեալ ճեմնարկ՝**  
Կիրակի, 15 Մարտ 2020 Brunch

**ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային Վարչութեան սեմինար և Գանատայի Շրջանի հիմնադրութեան 30-ամեակի տօնակատարութիւն**  
18-19 Ապրիլ 2020, Թորոնթօ

**ԼԱԻԱԼ**

**Փոքրերու Մաղկագարդ**  
4 Ապրիլ 2020

**ՄՈՆԹՐԷԱԼ**

**Համազգայինի «Թէյ, սուրճ և կարծիքներ» ակումբը կը ներկայացնէ «Investment for Soul Ինչպէս տանտէր դառնալ Հայաստանի մէջ»:** Զեկուցաբեր՝ Ատոմ Մալխասեան (Civil Engineer-Majoring in concrete and highways). Հինգշաբթի, 19 Մարտ 2020-ին, երեկ. Ժամը 7:30-ին, Կեօնեան Կեդրոնէն ներս: Մուտքի նուէր՝ \$5:

Տարեկան դրամահաւաքի բացառիկ համերգ մասնակցութեամբ աշխարհորչակ երգչուհի՝ Ալին Գուրբան և դաշնակահարուհի Նարէ Արդամանեանի, ի նպաստ Աթէն Արմէնեան հիմնադրամին որ կը տրամադրուի Հայաստանի մարզերու երաժշտական երիտասարդ տաղանդներ ֆաջալերելու: Կիրակի 8 Մարտ 2020 երեկոյեան Ժամը 7-ին: Պիտի խնդրուի չխաչացել: First Armenian Evangelical Church, 11455 rue Drouart, Montreal www.AtkenArmenianFoundation.com:

**ՑԱԻԱԿՑԱԿԱՆ**

ՀՅԴ Մոնթրեալի «Միհրան Փափագեան» կոմիտէն ցուակցութիւն կը յայտնէ ընկ. և տիկ. Յարութ և Զեփիլո Ասատուրեաններուն իրենց աներմօր և և մօր՝ **ԱՍՏՂԻԿ ՀԱՃԵԱՆԻ** մահուան տխուր առթիւ:

**ՑԱԻԱԿՑԱԿԱՆ**

«Հորիզոն» շաբաթաթերթի խմբագրութիւնն ու անձնակազմը ցուակցութիւն կը յայտնեն աշխատակից տիկ. Զեփիլո և պրն. Գեորգ Ասատուրեաններուն, իրենց մեծմօր և մօր՝ **ԱՍՏՂԻԿ ՀԱՃԵԱՆԻ** մահուան տխուր առթիւ:

ՀՅԴ Լաուալի «Սարգիս Զէյթլեան» կոմիտէն ցուակցութիւն կը յայտնէ ընկ. Սագօ Թորոսեանին, իր եղբոր մահուան տխուր առթիւ:

ՀՅԴ Լաուալի «Սարգիս Զէյթլեան» կոմիտէն ցուակցութիւն կը յայտնէ ընկերներ Արմէն և Եսայի Թորոսեաններուն, իրենց հարազատին մահուան տխուր առթիւ:


ՀՅԴ Լաուալի «Սարգիս Զէյթլեան» կոմիտէն ցուակցութիւն կը յայտնէ ընկ. Սօսի Ասատուրեանին, իր մեծ մօր՝ **ԱՍՏՂԻԿ ՀԱՃԵԱՆԻ** մահուան տխուր առթիւ:

ՀՅԴ Լաուալի «Սարգիս Զէյթլեան» կոմիտէն ցուակցութիւն կը յայտնէ ընկերներ Ներսէի և Նանոր Լիպարեաններուն, իրենց հարազատին մահուան տխուր առթիւ:

ՀՕՄի Գանատայի Շրջանային Վարչութիւնը խորին ցուակցութիւններ կը յայտնէ ընկ. Զեփիլո Ասատուրեանին, իր մօր՝ ընկ. **ԱՍՏՂԻԿ ՀԱՃԵԱՆԻ** մահուան տխուր առթիւ:

**ԲԱՐԻ ԱՊԱՔԻՆՈՒՄ**

ՀՅԴ Լաուալի «Սարգիս Զէյթլեան» կոմիտէն բարի ապահովում կը մաղթէ ընկ. **ՄԱՆՈՒԷԼ ԶԱՐՇԱՅԵԱՆԻ**ին:



**ՊՈԼՍԱՐԱՅ ԳԻՄՆԱՐԿ  
FONDATION BOLSHAHAY**

**ԳՐԱԻՈՒՄ ԹՈՒԱԿԱՆ**

Յառաջիկայ Նոյեմբեր 13, 2020 Ուրբաթ երեկոյ, կազմակերպութեամբ Պոլսահայ Մշակութային Միութեան, պիտի յիշատակուի Մոնթրեալի պատուաբեր արուեստագէտ, համբաւաւոր երգահան Մաժակ Թօշիկեանի երաժշտական ընդուն կեանքի 55ամեակը:

Կը խնդրուի չխաչաձեւել:



**Ascenseur Adams Elevator Services Inc.**

PO Box 30, St-Laurent, Qc. H4L 4V4  
**RBQ# 1812-6474-22**

**www.adamselevator.ca**

**TEL: 514-745-4455 - FAX: 514-745-6613**

**RENOVATION, REPAIRS, MAINTENANCE, INSTALLATION OF ELEVATORS.**

**Eddie, Pedro, Joyce Oughourlian**



**Ձեր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝  
(514) 284-7676**

**ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...**

**ԼԱԻՄԳՈՅՆ ՍՊՍՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ**

**PERMIS DE QUÉBEC**

3438 Rue St-Denis, Montreal, QC H2X 3L3, Fax: 514-284-7677

**horizon**

**H O R I Z O N**  
Hebdomadaire arménien  
**Armenian Weekly**  
Publié par / Published by  
**Les Publications Arméniennes (1991)**  
3401, Olivar-Asselin  
Montréal, Québec  
Canada H4J 1L5

**Abonnement annuel / Yearly subscription Canada**  
2<sup>e</sup> classe - 2<sup>nd</sup> class: \$80 plus applicable taxes  
1<sup>re</sup> classe - 1<sup>st</sup> class: \$95  
**États-Unis / USA**  
1<sup>re</sup> classe - 1<sup>st</sup> class: \$95 US  
**Ailleurs / Elsewhere**  
1<sup>re</sup> classe - 1<sup>st</sup> class: \$125 US

**Administration / Publicité**  
Sylva Eshradjian-Bachekjian  
**(General Manager)**  
Tél.: (514) 332-3757  
Télécopieur/Fax (514) 332-4870  
E-Mail: sylvia@horizonweekly.ca  
Courrier de deuxième classe  
/No. 40065294 / Second class mail  
Dépôt légal: bibliothèques nationales du Québec et du Canada - ISSN 0708580X

**Վարիչ Խմբագիր՝**  
Վահագն Գարազաշեան  
**Վարչական պատասխանատու՝**  
Սիլվա Պաշոգճեան  
**Քարտուղար՝** Մարինա Տէր Խաչատուրեան  
**Աագ խմբագիր՝**  
Վրէժ-Արմէն Արքիմեան  
**Անգլերէն/Ֆրանսերէն՝** Վիզէն Արքա-համեան, Թինա Սիլահեան  
**Չեաւտրում՝** Նէնսի Կիրակոսեան  
**Սրբագրիչ՝** Սոնա Թիթիգեան

**Թորոնթոյի Ներկայացուցիչներ՝**  
Գրիգոր Հոբոյեան, (416) 494-1921  
Ժագ Վարպետեան, (416) 722-9225

**Լուսանկարիչներ՝** Արմէն Ալեմեան, Մայր Թաշճեան, Իշխան Գազարեան, Վազգէն Տէկիրմէնքաչ

**Financé par le gouvernement du Canada**

**Funded by the Government of Canada**

**Canada**





MANOIR  
DE CASSON

775 rue Muir, St-Laurent, Québec H4L 5H1  
manoir.info@retirementconcepts.com | 514.748.1396



## *Résidence pour personnes âgées autonomes!*

Studios, grands studios, 3 1/2, 4 1/2  
disponibles dès maintenant  
au magnifique Manoir de Casson.

**SIGNEZ VOTRE BAIL AVANT LE 30 AVRIL, 2020,  
ET OBTENEZ UN MOIS GRATUIT!**

Contactez-nous dès aujourd'hui pour organiser  
votre visite et découvrir pourquoi

*il fait bon vivre au Manoir.*

@RETCONCEPTS

WWW.RETIREMENCONCEPTS.COM



BARRY KAZ  
 KAREN ANN  
 ALEX D  
 GARO I

**#1**  
**RE/MAX**  
**514 333.3000**



EXPERTISE

EXPÉRIENCE

EXCELLENCE

**CLASSÉS PARMIS LES MEILLEURS COURTIERIS RE/MAX AU NIVEAU MONDIAL**  
**RANKED AMONGST THE HIGHEST PERFORMING RE/MAX BROKERS WORLDWIDE**

RE/MAX 3000  
 AGENCE IMMOBILIÈRE

SIEGE SOCIAL: 9280 L'ACADIE, MONTREAL, QC H4N 3C5  
 PAVILLON: 2500 DES NATIONS 102. SAINT-LAURENT. QC H4R 3J9